



Ղևոնդ Ալիշան

Յուշիկք հայրենեաց Հայոց

Բնախօսութիւն Հայաստան աշխարհի

ԱՐԴ որովհետեւ կ'ուզես, Հայկակ, որ երբեմն ձմերուան իրիկունները ախորժաբեր կարմիր կրակարանին քով, եւ երբեմն լաւ եղանակին՝ ցորեկը ժուռ գալով բաց օդոյ եւ բնութեան մէջ, մեր Հայ հայրենեաց դիպուածոց եւ հանգամանաց մէկ քանին յիշենք . երբեմն ըստ աուր պատշաճի, այսինքն օրուան տարեդարձ յիշատակը պատմելով, եւ երբեմն ըստ կամաց եւ հաճոյից ընտրելով նիւթ մը . հարկաւոր կու սեպեմ այս առաջին անգամ մեր հայրենեաց բնախօսութիւն մ'ընել . ի հարկէ մեր երեկոյեան ժամերուն համեմատ՝ համառօտելով եւ ամփոփելով անանկ նկարագիր մը՝ որ կրնար շատ յերկարիլ, եթէ մենք այլ աւելի երկար ժամանակ ունենայինք՝ մեր աշխարհին անցեալ պատմութիւնը եւ ներկայ բնութիւնը քննելու:

Ա

Մեր Հայաստան աշխարհին ընդհանուր կերպարանքը շատ նշանաւոր երեւոյթներ կ'ընծայեն մեզի, Հայկակ . եւ մէկ խօսքով ըսելով, Հայաստան ընդդիմակներու երկիր մ'է գերագանց աստիճանի, որք քիչ ազդեցութիւն չեն ըներ իր բնակչաց բարուցը վրայ: Աշխարհագրական դրիցը պատճառաւ՝ Հայաստանի կլիման է ամենաբարեխառն, ամենաքաղցր, հաւասար Իտալիոյ, Յունաստանի, Սպանիոյ, Ասորեան կղզեաց . բայց ունի խստաշունչ ցուրտ՝ բելեռային շրջանակաց նման, եւ հեղձուցիչ տաք՝ արեւադարձից: Եւ այս հակառակաց պատճառն է իր դրից բարձրութիւնը ծովու երեսէն: Վասն զի մինչ մէկ կողմանէ

Երոսյիոյ շատ լերանց բարձրաբերձ գագաթունքն չեն հասնիր այն բազմամարդու մշակեալ տափից բարձրութեանը, ուսկից Եփրատ, Տիգրիս, Կուր եւ Արածանի սկիզբն կ'առնուն իրենց արծաթափայլ ջրոցը, եւ մինչ Մենբլունի, Կենիսուսի, Ս. Կոթարտոսի համբաւաւոր լեռնանցքն ստորեւ են Սեւանայ լճին ջրոց կապուտակ երեսէն, որուն շրջակայքն հարիրաւոր գիւղօրէք միշտ բազմամարդ բնակչօք լինեն . միւս կողմանէ քանի մը մասունք մեր հայրենեաց՝ ոչ միայն կ'իջնեն հարթ հաւասար մինչեւ ծովուն մակերեւոյթը, այլ նաեւ ստորեւ են քան գայն, ինչպէս Կասալից ծովուն ափունքն, ուր կը խառնուի Հայաստանի բնական մակարդակն՝ 25 մեդր ցած են քան գմակերեւոյթ Սեւա ծովու եւ Ովկիանու: Ասկէ առաջ կու գան այն Հակադիմութիւնքն եւ այն փոխադարձ խաղերն երկու հակառակ եղանակաց, որոնց մէկն՝ երբեմն կը հալեցունէ, կ'ըսեն, իր հրացայտ ճառագայթներովը Տիգրանակերտի գմբեթաց կապարը, մինչդեռ մէկայն վեց ամիս կը սփռէ իր սպիտակ պատանքը երկրին մեծագոյն մասին երեսը, եւ կ'իջեցունէ գուգախառնութիւնը 26 Ռ . գրոյէն վար: Այսպիսի ատեն կարաւաններն հետերնին կ'առնուն թանձր մուշտակներ, կտրելու անցնելու համար ձեան ու սառուցի խաւերուն տակ պնդացած լճերը ու գետերը, որով չեն զանազանուիր ձորն ի դաշտէն: Երջանիկ են այն յանդուգն ճանապարհորդներն՝ եթէ կարենան ազատիլ հիւսերէն եւ ձեան փոթորիկներէն, որ շատ անգամ կը թաղեն ամբողջ կարաւաններ: Այսպիսի դիպաց մէջ փրկութեան վերջին յոյսն, ըստ վկայութեան Ստրաբոնի, էր երկայն ձող մը, գոր ձեան տակ թաղուող թշուառն կը ջանար ցցելու իր սառնեղէն բանտին կամարէն դուրս՝ իբրեւ նշան բաբախուն կենացը, որ ազատարարի մը կը սպասէր: Այս կերպով ազատեցաւ արքայն Սանատրուկ երեխայութեան ատեն, յետ մնալու երեք օր ստնտուին գիրկը կապուած ձիւնեղէն բանտին մէջ . իր թոռն, Տիրան, թշուառագոյն քան զինքն, հոն կորսընցուց կեանքը յետ թագաւորելու 20 տարի: Օգտակար ճիգն էր եւ պատուաւոր պաշտօն մը՝ մեր արշակունի թագաւորաց ատեն՝ արքունի ոստիկանութիւնն ձեանց, յորմէ կ'առնուր իր անունը մեր ազնուական ընտանեացը եւ կամ նախարարութեանց մէկն, եւ կ'ըսուէր Ձիւնական: Ճանապարհորդաց ապահովութեանն համար պանդոկներ կամ կայանք կը հաստատուէին յաճախեալ եւ վտանգաւոր ճանապարհաց եւ անցից վրայ . ինչպէս են, բաց յայրոց, Ռահվայի ձորոյն Խաները, ընդ մէջ Բաղիշու եւ Խլաթայ: Այս հայկական ձմեռն, ինչպէս կ'անուանէ մեծն Ոսկեբերան, որ անձամբ փորձեց անոր խստութիւնը, շատ անգամ ահտուաւ աշխարհակալաց . եւ առակ եղած է հին պատմչաց եւ քերդողաց մէջ,

Քսենոփոնէն սկսեալ մինչեւ ի քիզանդացի ժամանակագիրներն: Մեր օրերն բնապատում ճանապարհորդք ստուգեցին որ Էրզրոմի ձմեռն աւելի նուազ խիստ չէ՝ քան մեծին Ս . Բեռնարդոսի լեռան ձմեռը, թէպէտ եւ առաջնոյն աշխարհագրական լայնութիւնն 5 աստիճան նուազ է, եւ բացարձակ բարձրութիւնն ալ 500 մեդր նուազ է քան գեոչակատր վանքն Ալպեայց: Դարձեալ Ակոռոյ ձմեռն 99 աստիճան լայնութեան տակ, եւ 1760 մեդր բարձրութեամբ, հաւասար է Հիւսիսային Գլխոյն ձմեռան՝ սառուցեալ գօտոյն տակ՝ Երոպայի ծայրը: Երեւան, մայրաքաղաքն Ռուս Հայաստանի՝ ամառն ստուերի մէջ ջերմութիւնն ելեր է 30° . ձմեռն իջեր է անգամ մինչուան 40° . գրոյէն վար . այսպիսի տարբերութիւն մը որ հազիւ թէ սառուցեալ գօտոյն մէջ Կրէնլանտի կղզին կը տեսնուի . ընդդիմակ մը որ գրեթէ ուրիշ տեղ չտեսնուիր:

Այս ընդդիմակութիւնս աւելի զգալի կ'ըլլայ երբ նկատենք մեր հայրենեաց երկրին ամայի երեսը՝ այն ժամանակը, երբ այն լեռներէն անդին՝ որ զինքը կը բաժնեն Պոնտոսէն, նարընջենիներն անուշահոտութեամբ կը բուրեն բաց օդուն մէջ ի Տրապիզոն, գոր արդէն ողջուներ է ծիծառնուկն, Հայաստանի վրայէն անցնելով՝ առանց հոն ոտք կոխելու . մինչդեռ ուրիշ կողմ մը՝ ցածագոյն լեռանց ոտքը, Մուսուլ, սառոյց կը ծախեն, տաղտկացուցիչ ջերմութիւնը բարեխառնելու համար: Եւ սակայն Պոնտոսի մայրաքաղաքէն մինչեւ Ասորեստանի մայրաքաղաքը, Հայաստանի տարածութիւնն՝ ուղիղ գծով չառաւելուր քան 96 700 Հազարամեդր . այնպէս որ շոգեկառք մը կրնայ կտրել այս միջոցս արեւուն ծագումէն մինչեւ մուտքը, եւ կ'ունենայ ճամբորդն առաւօտ մը գարնան, միջօրէ մը ձմեռան եւ երեկոյ մ' ամարան: Հաւանօրէն դուն այս զբօսական ճանապարհորդութեանս ձեռք չես գարներ, Հայկակ . չես ուզեր մի եւ նոյն օրուան մէջ երեք այլ եւ այլ եղանակ ունենալ, մանաւանդ երկրորդը: Այդ ի՞նչ խստաշունչ երկիր է, պիտի ըսես, այդ ի՞նչ թշուառ հայրենիք է եղեր մեր Հայաստանն: Ա՛հ, երբ սիրելի ըլլան հայրենիք, ամեն եղանակներն ալ գեղեցիկ կ'ըլլան, եւ վայրենագոյն բնութիւնն անգամ կը քաղցրանայ բարեկիրթ սրտի մը: Ի վերայ այսր ամենայնի ես շատ երոպացի կը ճանչնամ՝ Բարիգու եւ Լոնտրայի բնակիչներէն, վաճառականներ եւ հիւպատներ, որ դժուարաւ կը թողուն Էրզրոմի բնակութիւննին յԵրոպա վերադառնալու համար . թէպէտ եւ կը տեսնեն որ ջուրը կը սառի հոն նոյն իսկ խեցգետնի արեւադարձին գիշերը . բայց այն չորս կամ հինգ ամիսները, որ երկու ձմեռանց մէջ կ'ընկնին, վերադաս կը

համարին քան զբոլոր տարին ուրիշ կլիմայի տակ:

Օդոյն առաձգութիւնն ու գտութիւնն եւ անոր հոսանաց գոլութիւնն, ջրոց յստակութիւնն, բուսաբերութեան առոգութիւնն ու պայծառութիւնն, եւ այս կերպով մը օդապարիկ երկրիս արգասեաց համեղութիւնն, կազմեցին զՀայաստան տեղի զբօսանաց եւ ամարաստուն աշխարհակալացն Ասիոյ եւ իրեն մերձաւոր թագաւորաց, սկսեալ Շամիրամայ մինչեւ ցկուսակալս անդրկովկասային գաւառաց Ռուսաց: Վանայ բերդն, որ սեպացեալ ժայռի մը գլուխը կանգնուած է, հարիւրաւոր ոտք բարձր է ստորակայ լեռնադաշտակէն, ան ալ աւելի քան զ5100 ոտք բարձր է ծովու երեսէն, այն բնութեան եւ արուեստից հրաշալիքն, առաջին հանգրուան հաճոյից եւ ամարաստուն եղաւ այն աշխարհակալ թագուհոյն, որուն անունը ինչուան այս օրս կը կրէ, այն անունը որ շատոնց մոռացութեան մէջ թաղուած է Բաբելոնի եւ Եկբատանայ աւերկացը տակ: Իսկ մեր թագաւորներն պէտք չունէին իրենց ձմերոցն օտարներու քով փնտռելու: Մուղանայ ընդարձակ դաշտն կամ անապատը, զոր կը կտրեն ու կ'անցնին Երասխ եւ Կուր, իրարու հետ խառնուելէն թէ՛ առաջ եւ թէ ետեւ, ամեն ժամանակ ձմեռը մեր հայրենեաց կենդանիներուն ապաստանարան եղեր է: Ամառն խոպան անապատ մ'է, եւ արեւէն այրած խոտերուն տակ կը պահէ խորամանկ օձեր, որոնցմէ Պոմպէի բանակն աւելի նեղութիւն կրեց՝ քան թէ Ասիոյ բոլոր թշնամիներէն, ամառուրնէ դէպ ի ձմեռն՝ արօտատեղի եւ ճշմարիտ ապաստան կը փոխուի: Այն վերջին եղանակին մէջ՝ հագիւ թէ թափանցիկ բարակ ձիւն մը կը նստի: Մուղան կը չէննայ օդոց այն գեղեցիկ եպիկուրեաններէն, (թրոշուններէ), որոնց տարետր տեղափոխութիւնք կը հիացունեն գերկրագործ եւ զիմաստասէր: Այս խաղաղասէր թռչնոց ցեղէն բոլորովին տարբեր եւ օտար ցեղ մը՝ միջին դարուն՝ այս ընդարձակ միայնութեանցս տիրելով, ծածկեց զանոնք պատերազմասէր հրոսներով, որ եկեր էին Ջիհունէ եւ Եաքսարտէ անդին եղած անապատներէն . Մողոլաց անհամար բանակներն, առաջնորդ ունենալով զՉուրմաղուն եւ Հուլաղուն, հոն ձմեռն իրենց ձիերը ու բանակները կը վարժեցընէին արիւնհեղութեան եւ աւարատութեան, զոր ի գործ կը դնէին գարնան, բոլոր շրջակայ երկիրներուն մէջ: Անոնց արիւնարբու գլխատրներն, երբ տաքերը կը հասնէին, Ալատաղի գովացիկ բարձրերը կ'ապաւիւնէին, որ Այրարարատայ պարուն լեռ մ'է, եւ վրան Ապաղա դան մեծածախս դղեակ մը շինեց, քաղաքի մը չափ ընդարձակ, որուն աւերակներն ինչուան հիմայ անայցելու մնացեր են

ճանապարհորդներեն, ինչպես դիրքն ալ անձանօթ է հիմակուան անուանի արեւելագէտներեն՝ որք Մողոլաց պատմութիւնը գրեցին:

Բ

Արարատայ այն լեռանց պարն՝ գոր հիմայ յիշեցի, բոլոր Հայաստանը երկու կը բաժնէ, թափելով իր ջրերը մէկ կողմէն Եւքսինեան եւ Կասպիական ծովերուն, միւս կողմէն՝ Միջերկրական ծովը ու պարսկային ծոցը: Այս շրթայն – կցուելով լեռանց այն ընդարձակ գօտոյն հետ՝ որ ծայրէ ծայր կը շրջապատէ հորիզոնաբար գբովանդակն Ասիա, սկսեալ Չինաց եւ Հնդկաց եզերքէն մինչեւ փոքր Ասիոյ եզերքը, ու կը ձգուի մինչեւ արեւելեան Եւրոպա, այս հայկական պարը կամ շրթայն, հանդերձ իր լեռնամոյթներովը, նոր ժամանակաց առաջին բնապատումն Հումպոլթ կու սեպէ իբր կեդրոն ծանրութեան բոլոր հին աշխարհի: Սակայն այս շրթայն, ինչպէս ուրիշ Հայաստանի շրթաներն ալ, որոշ չիծրագրուիր նման անթափանցելի պատուարացն Կովկասու, շարունակ կատարացն Անտեայց, Հիմալայայ, եւ Ապենինեանց . եւ ոչ իսկ Տաւրոսի վեհ տեսքն ունի: Հայաստան ունի շատ մը երկրորդական շրթաներ ճիւղիցն Կովկասու, Տաւրոսի եւ Այրարատայ, որ կ'ընդհատին շատ հեղ լեռնակոյտներէ, ցցուեալ առանձնակ սարերէ, որք շատ տարբեր կերպով վեհ են իրենց ձեւովը, բացարձակ բարձրութեամբն եւ իրենց տարածոցովը . եւ իրաւամբ է որ նոր աշխարհագրաց հայրն, Ռիդդեր, կը կոչէ մեր հայրենիքը Լեռնակղզին: Արդարեւ ուրիշ կերպ չերեւար Հայաստան եթէ դիտուի ընդ մէջ դաշտացն Միջագետաց, Ադուանից եւ Վրաց, ընդ մէջ Սեաւ ծովուն եւ Կասպիական ծովուն . ուր լեռնադաշտն կ'ամբառնայ աւելի քան զ' 2000 մեդր հանդերձ լեռներով, որոնց բացարձակ բարձրութիւնն է մինչեւ 5000 մեդր: Այս լեռնադաշտիս բարձրագոյն կէտն Մասիս, կամ Մեծն Արարատ, կ'առաւելու բարձրութեամբ իբր 500 մեդր քան զՍպիտակ լեառն, եւ երեք կողմանէ առանձնացեալ՝ կը բարձրանայ իբրեւ հսկայ լեռանց 4000 մեդր Երասխայ դաշտէն վեր, ցուցնելով փառաւորապէս ինչուան 50 փարսախս հեռուն իր ալետր գլուխը . սպիտակ քօղն՝ որ մշտնջենապէս կը ծածկէ գայն, ընդդիմակ երեւոյթ մը կը ներկայացնէ իր սեւ կողերուն հետ՝ երբոր անոնք իրենց ձմեռնային ծածկոյթը ձգեն:

Դիտելու արժանի գարմանալիքներէն մէկն է դարձեալ մեր երկրին մէջ մշտնջենաստր ձեանց բարձրութիւնն, որ բաց ի Մասիսէն եւ ուրիշ քանի մը բարձունքներէ, ամբողջ տարին չեն դիմանար: Այդ սառնեղէն գիծն հայկական լեռանց առանձնակ սարերուն վրայ շինչնար ի վայր քան 4000 մէր, եւ գօտիներուն վրայ քան 3500: Իրատունք ունէր ուրեմն լատին բանաստեղծն (Ռաստիոս) գարմանալու որ

Եւ ոչ ի սարս լեռանց Հայոց

... Պաղ թանձրամած կայ միշտ անլոյծ

Չհամաբոլոր ընթացս ամսոց:

Ինչպիսի՛ գարմանալի ընդդիմակ երեւոյթ կ'ընծայեն ուրեմն մեր հայրենիքն ընդ մէջ տարւոյն երկու ծայրերուն ու միջին ամիսներուն . ի՞նչ գանազանութիւն ընդ մէջ համատարած սպիտակութեան եւ պէսպիսագոյն կանաչութեան՝ որ շուտով մը առջինին տեղ կը փոփոխի:

Բայց ի՞նչպէս կ'անհետանան արդեօք այդ ձեան եւ սառույցի սարսափելի կոյտերն . ո՞ր արդեօք կ'ամբարին այնքան անբաւ ջուրեր: Անտարակոյս պէտք էին բոլոր մեր երկրին երեսը ողողել, աւերել ու փշացնել, եթէ նախախնամութիւնն առաջուց անոր կորնթարդ դիրք մը տուած չըլլար, կմբրածել վահանի մը պէս գետեղելով չորս միջերկրական ծովուց միջոց . ուր կը թափին այդ ջրոց մեծամեծ քանութիւն՝ եւ կը ձեւացրնեն առաջակողմեան Ասիոյ մեծագոյն գետերը: Բաց ի երկրին զգալի կորութենէն՝ գետոց յատակքն ալ շատ խոր են, եւ ոմանք ինչուան հարիւրատր ոտք բարձր ավտունք ունին իրենց թուխ ալիքներուն վերել . այս պատճառաւ է որ շատ մեծ ու փոքր գետեր Սեւ կը կոչուին: Բայց այդ տարետր ջրհեղեղը չէր բաւեր երկրին արբուցմանը, եթէ մշակողաց երկայնամիտ վաստակն բազմաթիւ ջրանցքներ եւ ջրոց ընդունարաններ չբանար, եւ շարժուն ցանց մը չձեւացուներ իր մարդացն ու անդաստանացը եզերք: Պէտք է ճանչնանք ուրեմն որ մեր նախնիքն, առանց ներկայ դարուս դիւրութիւններն ունենալու՝ շատ ճարտար էին ջրաբաշխական արուեստի մէջ: Ձորոց խոռոչներուն մէջ թմբած ջուրն՝ ոչ միայն նեղ ժայռերու մէջէն ճամբայ բանալով կ'ընթանար անխոնջ երկրագործին քրտանց ձեռնտու ըլլալու, այլ եւ երբեմն աւելի դժուարին եւ

օճապտոյտ ճամբաներով՝ սուր եւ սեպածեւ բլորներու եւ ժայռերու գագաթը կը բարձրանար, ձեւացրնելու աւագան մը ժայռերու մէջ փորուած՝ բռնաւորի եւ կամ բռնաւորէ մը ընկճուած հպատակի մը ամրոցին մէջ: Ուրիշ տեղ ալ տարբեր վախճանի համար խոր գետերու տակէն գետնափոր ուղիներ կը բանային, օրինակի համար Անի, բուն Հայաստանի ետքի մայրաքաղաքն, Լոնտրայէն 800 տարի առաջ ալ ունէր ստորգետնայ ջրանցք: Այդ ջրաբաշխական մեծագործութիւնքն հաւաստիք մ'են թէ կարող էին ուրեմն գանոնք շինողներն նաեւ մեծամեծ ջրոց հոսանքները քարաշէն կամարներով ալ սանձել, կ'ուզեմ ըսել կամուրջներով . այնչափ բազմաթիւ էին կամուրջներն՝ որ միջին դարու մեր ազգային երգիչներէն մէկն կ'երդնուր, ,Ա՛յ քարաբաշէն կամուրջնի: Բայց սակայն շատ դիւրին գործ մը չէր ճարտարապետին մէկմէկու միացնել անանկ երկու ափունք, որոնց մէջէն կ'արշաւէին սրննթաց եւ գայրագին գետեր, վկայ է Վիրգիլեայ գեղեցիկ տողն:

Ի կամրջոց ըմբոստն Երասխ

Փուճ տեղը ջանացին Աղեքսանդր եւ Օգոստոս ինքանակալներն սանձահարեալ այդ ամեհի գետը . ուրիշ ինքնակալ մը աւելի երջանիկ սեպեց զինքը՝ անոր վրայ գէթ առժամանակեայ կամուրջ մը ձգելով, եւ ահա մէկէն ուրնշ շողորորդ բանաստեղծ մ'ալ (Ստադիոս) երգեց:

Լատինական կամրջոց արդ հըլու Երասխ:

Բայց այդ գայրագին գետն, արհամարհելով կայսերական ձեռագործներն՝ իր ալեացը ներքեւ ընկճեց գանոնք, մինչդեռ հեզիկ եւ ուժաթափ եօթնականար մեծ կամրջի մը կամարաց տակէն կ'անցնի, որոյ հիմունքը համեստ հովիւ մը ձգեց: Հովուի կամուրջն (Չօպան քէօփրիասիա) Հայաստանի եւ անոր շրջակայիցը մէջ առակ եղած է: Թողլով, ուրիշները, յիշեմ մէկ կամուրջ մ'ալ միայն: Ձորոփոր գաւառին մէջ, միակամար քարաշէն, գոր այրի թագուիի մը իր ծաղիկ հասակին մէջ կանգնել տուաւ ի յիշատակ իր թագաշուք վախճանեալ ամուսնոյն Աբասայ, խոր հեղեղատի մը վրայ ձգելով, իբրեւ խորհրդաւոր նշան միութեան երկուց սրտից, երկուց աշխարհաց եւ երկուց հանդիպակաց կենաց, կամրջոյն ստորոտը խաչարձանի մը վրայ դրոշմել տալով իր սիրոյն եւ կենդանի հաւատոց նշանակը: Չի կրնար հայրենասէր մը յանցանելն այս (կը համարձակին ըսելու) հրաշակերտ

կամրջէն, չտալ տխուր աչք մը թէ այն սրարշաւ ալեացը վրայ՝ որ միշտ կը թողուն եւ միշտ կը ծածկեն իրենց հունը, թէ՛ այդ արձանագրութեան վրայ՝ որ քրիստոնէական յուսոյ նշանինտակ անեղծ պահուած է, եւ թէ այն մերձաւոր կրկին վանքերուն վրայ, Հաղբատայ եւ Սանահնի, Հայաստանին միջին դարուց Ս . Դիոնեսիոսն ու Ս . Պօղոսը, ուր կը հանգչին աւելի քան 40 պսակագարդ գլուխք ընդ պարկեշտասուն թագուիոյ Նանայի, որ է հիմնադիրն կամրջոյս . բարեբաղդաբար ժամանակն, որ մարդէս աւելի խնայել գիտէ, անարատ պահած է մեզի 700 տարուրնէ ի վեր՝ այդ միանգամայն հայրենական եւ կրօնական յիշատակարանը: ... Բայց այս ի՞նչ է, մի՞թէ այդ փրփաղէզ ալեաց ներքեւ ծածկուած յուշկապարիկ մը կայ՝ որ կը հրապուրէ զիս նիւթս դուրս արշաւելու: Ա՛հ, Հայկակ, ի՞նչ աւելի գօրաւոր, աւելի յափշտակիչ եւ աւելի սրբանուէր բան կայ, քան բնութեան եւ կրօնից գուգայարմար ներդաշնակութիւնն, հանդերձ հայրենեաց յիշատակներուն եւ ցաւերուն:...

Հայաստանեայց ջրաբաշխութեան վրայ խօսքս չկնքած՝ անշուշտ անդրադարձութիւն մըրիւր, որ երկրին գառիվայր դիրքն, լեռանց բարձրութիւնն, ողիխից եւ հեղեղաց առատութիւնն, եւ համեմատաբար անոնց ընթացից կարճութիւնն՝ պէտք էին որ ջրվեժներ եւ հոսանքներ գործէին . եւ յիրաւի մեր գետոց անուններն իսկ, ինչպէս Երասխ, Տիգրիս, Ճորոխ՝ իրենց երազ ընթացքէն առնուած են . առաջինն՝ անուանի է իր վսեմակերպ քարավազ թափուածքովն՝ ընթացիցը վերջերը, որ հիմայ Ռուսիոյ ինքնակալութեան հարաւագոյն մասին վրայ է, եւ անոր ամենամեծ գետերն իսկ այդպիսի սքանչելի եւ միանգամայն զարհուրելի երեսոյթ մը չունին, վասն զի այդ վիհերուն եւ մեծամեծ ժայտերուն մէջէն իրեն անցք մը բանալու համար, պէտք եղած է որ երկրաշարժն ամբողջ Մեծ լեռը հիմն ի վեր տապալէ, եւ թողու մեր ազգային գետոյն թաւալիլ գահավիժաբար, իբրեւ փրփրերախ եւ սանձարձակ երիվար մը: Այդ ժայտերուն յամառ դիմակալութիւնը ընդդէմ Երասխայ գայրագին յորձանաց՝ տեսնելով մեծն Շահ Աբաս, կ'ըսէր քովիններուն . Ահա ձեզի օրինակ թշնամեաց դիմակալելու . որուն՝ Այո՛, պատասխանեցին, տէր արքայ, երբոր այդպիսի գօրաւոր նեցուկներ ըլլան . ցուցընելով իրեն ապառաժ գետափունքը՝ գոր ջուրն կը ծեծէր: Եփրատէս, սուրբ գրոց գետերուն պարագլուխը, որուն ակունքը 9000 ոտք բարձր են, Կարնոյ Ծաղկի լեռնէն սկսելով, 300էն աւելի քարավազ ունի, 12 փարսախս միջոց Մեծ եւ Փոքր Հայոց մէջտեղ: Ասոր արեւելեան օժանդակն՝ Արածանի,

Մշոյ անուանի Ս . Կարապետ ուխտատեղոյն մօտ՝ բոլորովին միաձոյ կը թափի բարձրէն, եւ անկմանը ձայնէն տեղն ալ Կուրկուտ կը կոչուի: Վերջապէս ճորոխ Հայապոնտական գետն, քան գառաջիններն աւելի կարճ եւ երագ ընթացքով, լիճ մը կտրելով անցնելով՝ կատարեալ ջրվեժ մը կը ձեւանայ, եւ ինչպէս կը վկայէ գերմանացի բնագնին մը, որ աշխարհիս երեք գլխաւոր մասերուն յայց ելած եւ զարմանալիքը դիտած է, բաց ի Նիակարայի ջրվեժէն՝ գեղեցկութեան կողմանէ ուրիշ մը մերինին չի հասնիր: Կ'ուզե՞ս հիմա այդպիսի գետոյ մը վրայ նաւարկութիւն փորձել . մտիք նաւակ մը Արդուինէն, որ Լազիստանի սահմանակից քաղաք է, ինչուան գետոյն բերանները՝ ի Պաթում, 6 կամ 7 ժամուան մէջ կրնաս իջնել . կ'ուզե՞ս դարձեալ Պաթումէն յԱրդուին դառնալ . նոյն եղանակով 6 կամ 7 օրուան մէջ կը հասնիս . կը տեսնաս որ գետոյն յատակն շատ զառիվայր է, իսկ հոսանքն աւելի շատ երագ: Ուստի մեծ բան մը պէտք չէ յուսալ Հայաստանի գետոց նաւարկութենէն . թէպէտ եւ բաւական մեծութեամբ նաւակներ՝ Կուրը եւ Երասխը կտրելով անոնց խառնուրդէն վեր ալ կ'անցնին:

Սակայն Յունաց պատմահայրն մեզի կը ծանուցանէ, թէ իր ժամանակն Հայք՝ Եփրատայ վրայ կէս բարբարոս՝ բայց հանճարեղ նաւարկութիւն մը կ'ընէին . իրենց երկրին եւ օտարին բերքերը կը տանէին, մանաւանդ տեսակ մը արմաւի գինի, բոլորածեւ նաւակներով, որոնց կմախքը կամ ներսի կողմը ուռննոյ ճիւղերով եւ դուրսը մորթով պատած էր, եւ ինչուան 5000 տաղանդ կրնային վերցընել: Գետոյն հոսանացը թողլով՝ շիտակ Բաբելոն կը հասնէին, իսկ դարձը ցամաքով կ'ընէին, այս կերպով . նաւակացհաստատուն մասերը կը ծախէին, իսկ մորթը՝ հետերնին նաւակով բերած իշոց վրայ դնելով, կը դառնային իրենց նաւահանգիստը, որ անշուշտ չէր նմանէր Մարսիլիոյ: Թերեւս քեզի ծիծաղելի երեւի այս բանս, բայց աղուաբանն Երողոտ՝ այդ նաւարկութիւնը՝ Ասորեստանի մայրաքաղաքէն ետեւ՝ բոլոր այն աշխարհին զարմանալիքներէն վեր կը համարէր:

Գ

Չիմայ ջրերը մէկդի թողլով՝ մօտենանք հողուն, փութանք հասնիլ անգործարան արարածոց, եւ երկրաբանական կազմութեանց բազմամանուած պատկերը ձգելով՝ շանանք աւելի նշանաւոր ու յղկաքարը (օգտակարագոյն նիւթերը ու

տարերքը քննել, եւ նախ սկսինք ի վաղուց ծանուցեալ ներկական ու հողային հանքերէն: Ո՞ր դեղագործ չյարգեր Հայկաւր, որ կարմրագոյն հող մ'է, Լեմնուսի կաւուտ հոգուն նման . եւ երկուքն ալ հիմա իր անուամբն կը կոչուին . որոյնման կաւ մը կայ եւ ի Գաղղիա Լուստ գետոյն երկու ափանցը վրայ, ի Պլուտ եւ ի Սոմիր: Ո՞ր պատկերահանին ծանոթ չէ Հայոց հողը, այն կարմիր ներկը՝ որ որմնանկարուց խառնրդոց մէջ կը մտնէ: Թէ՛ նկարիչք եւ թէ դեղագործք կը յարգեն Հայոց քարը՝ Թէոփրաստեայ օրերէն ի վեր, իր գեղեցիկ կապոյտ գոյնովը ճանչցուած, եւ երբեմն գոճագմի հետ շփոթուած, որ եւ երբեմն իողոտ եւ շիկակարմիր կ'ըլլայ: Դարձեալ հռովմայեցի նկարչաց ծանօթ էր Արմինիում ըսուած հայկեան կապոյտ եւ ճերմակ ներկն, որով իրենց պալատներուն պատերը կը գարդարէին, եւ որոյ լիտրն վեց ֆրանգ կ'արժէր: Իրենց անուանի քանդակագործքն՝ Սուսերամարտիկը ու Պելվետէրէի Ապոլոնը յղկելու համար, Նաքսոսինէն աւելի Հայաստանի յղկաքարը (cotes) կը գործածէին, որ նաեւ մարգարիտներն ու ազնիւ քարերը յղկելու կը ծառայէր: Իսկ միւս քողէան, այսինքն յեսանաքարն Հայոց՝ Նաքսոսինէն ստորին կը սեպուէր: Հիներուն ծանօթ էր Հայաստանի ուրիշ կարծր քար մ'ալ, որ երկաթէն աւելի զօրաւոր նիւթերով՝ կնքոց դրոշմը կ'ընդունէր: Նախնիք կը գործածէին նաեւ հայկական Ոսկենածոյցը *Crusocollo armeniaca*, որ Մակեդոնիոյ ու Կիպրոսի մէջ ելածէն աւելի ընտիր էր . բայց ափսոս որ հիմայ անհետացած է, եւ չգիտցուիր ուր գտնուիլը, բայց կարծեմ թէ տեսակ մը արջասպ էր, եւ նոյնն՝ ինչ որ Արաբացիք մեր աշխարհին անուամբ Պուրէի էրմինիէ կ'ըսէին: Դարձեալ ուրիշ տեսակ մ'ալ կը հանէին: Պուրաք էլ էրմանի անուամբ, զոր մեր բժիշկներն հիմակուան Օլթիի վիճակին մէջ կը դասեն: (Ուխտիցի արջասպ): Մեր երկրին այս տեսակ բերոց զանազանութեամբ այնչափ հարուստ է, որ շատ երկայն կ'ըլլայ մանրամասն խօսիլ անոնց վրայ, այս միայն բաւական կը սեպեն ըսել որ Հայաստան ճոխ է նաեւ ամեն ազգ կաւերով, մետաղներով ու պաղլեղով, որ Դիոսկորիտեայ ծանօթ էր, մանաւանդ ամեն տեսակ ու ամեն ձեւով աղ խիստ առատ կը գտնուի: Կողբայ եւ Նախիջեւանու աղահանքն՝ Նոյի որդոց ժամանակէն ի վեր կը բանին: Հայոց երկու գաւառներն՝ աղի անունը կը կրեն: Դարան աղի ու Մանան աղի, որոնց աղահանքն ամենուն ծանօթ են: Ուրիշ մերձակայ նահանգաց գաւառներ ալ նոյնպէս աղի անունովը կ'ըսուին Մարդ աղի, Աղօրի, Աղտից ձոր եւ Աղիովնտ, ուր աղբերք, վտակներ եւ աղի լճեր բազմաթիւ են: Բայց թէ արդեօք ասոնք ողողի՞չ կան սկզբնաւոր ծովու մը քաշուելէն, եթէ երկրիս հին կազմութենէկամ

հրաբուրդխներէ ձեւացած են . ասոր լուծումը կը թողում երկրաբանից:

Դիրավատ հանքաց մէջ ծանօթագոյնն է Ծըծումբը որ դեռ Արագածու ծայրերը ոսկեգոյն կու փայլեցընէ . սեւ եւ ճերմակ Նաւթը, Կարածիթն կամ քարածիթը . որոնց հետ պէտք է յիշատակել նաեւ Վանայ մօտ եկեղեցեաց մէկուն մէջ քարէ մը ելած եղը, որ հաւաստի ստուգուած բան է: Հանքայինաձխոյ նշաններ տեսնուած են ընդ մէջ լերանց Բարձր Հայոց եւ Այրարատոյ եւ յայտնի գտնուած Տայոց Ուխտիք (Օլթի) գաւառին մէջ: Մեր նախնի աշխարհագիրք կը յիշատակին այս լերանց մէկուն մէջ: Էրզիռումայ հարաւային արեւելեան կողմը, նաւթի հետ մէկտեղ ուրիշ երկու նիւթեր ալ, որք մեզի անծանօթ են, բայց կարծեմ թէ հրային հանքեր են . կը յանձնեն մեր հայրենակցաց քննել այն տեղերն եւ մեզի ծանօթացնել թէ ի՞նչ են Ձիղկն ու Սալակը . որոց մէկն գուցէ ըլլայ նոյն ինքն հանքային ածուխ: Անոնց խնամոց կ'աւանդեն նաեւ որոշել Վանակնը, գոր շատք ժայռի բիրեղի տեղ կ'առնուն:

Իսկ ազնիւ քարանց նկատմամբ, մեր նախնիք Արարատինները յարգի կը համարին, առանց որոշ տեղերը նշանակելու, այլք կը յիշատակեն յասպիսը, Թորգոմ գետոյն եզերքն, որ Կասպից թովը կը թափէր: Մովսէս սուտակն եւ ակն դահանակը կը յիշէ Եփրատայ եղեմական երկիրը, Փիսոնի եզերքը, որ ըստ մեզ է Ճորոխ, եւ Եփրատն` Խաղտիք մեր, ըստ Յունաց ընտիր մատենագրաց` Խալիքք: Չմոռնանք նաեւ Արածանոյ աղբերականց մօտիկ Տիատինի վտակաց ձեւացուցած գեղեցիկ եւ բոլորածեւ ուլունքն այլ:

Իսկ հասարակ քարանց կողմանէ Հայոց լերինքն անսպառելի հանքք են . նոյն ինքն մեծն Մասիս միակտուր սեւ պորփիր քար մ'է կատարը ճերմակ փաթեթ պատած, որ անշուշտ իր հինգ հազար մեղր ուղղահայեաց բարձրութեամբն շատ աւելի վսեմութիւն մ'ունի, քան Շամիրամայ մեր լեռներէն կտրած կոթողը, գոր Ասիոյ մայրաքաղաքին կեդրոնը կանգնեց, իբրեւ հին եօթն հրաշալեաց մէկը: Այս քարանց քանի մը կտոր կրնան տեսնուիլ եւ ի Բարիզ Լուվրի գետնայարկ սրահներուն մէջ, զարմանալի քանդակներով եւ աւելի զարմանալի արձանագրութեամբք ծածկուած: Բաբելոն եւ Նինուէ մեծաւ մասամբ մեր երկրին բնիկ հարստութիւններովն կանգնուեցան ու զարդարուեցան . յայտ է թէ ինքն ալ գուրկ չէր այդպիսի շինուածներէ: Թէ՛ եւ ուրիշներէն աւելի

արըշտկուած ալ է, սակայն դեռ ինչուան երեք հազար մեդր բարձր լերանց գագաթան վրայ ալ բեւեռագիր արձաններ ունի: Խօսքս՝ մեր երկրին քարահատից երկարապատում ցուցակովը չծանրաբեռնելու համար, այսչափ միայն ըսեն որ հայ հողուն տիրող քարերն են պարփիւր եւ պագալո: Այս յետինս Մեւանայ լճին մօտերը Գառնոյ խորածորին մէջ հարիւր մեդր բարձրութեամբ կոթողներ ձեւացուցած է որ իրացընէ մոզական եւ վսեն տեսարան մը կ'ընծայեն, արժանատր մեծոգի ախորժակաց հսկահասակ թագաւորին Տրդատայ, որ վախից եւ անդնդոց վրայ երկընցած սարատափի մը ծայրը շքեղ հովանոց մը կանգնեց, ի վայելս Հայոց Օրիորդին, իր սիրական քրոջը, ,Ի համար քեռ իւրոյ Խոսրովդիստոյն . վրան տասուիրեք դար անցնելէն ետեւ գետնաշարժով մը կործանեցաւ . բայց իր մնացորդներն, գրեթէ ամբողջ կեցած՝ կը հաւաստեն մեզի՝ որ այդ դաստակերտն Յունաստանի եւ Հռովմայ ընտիր կերտուածոց վերջինն էր: Այս բնութեան եւ միանգամայն արուեստի կառուցած հոյակապ արձաններու անմիջապէս մօտ՝ ուրիշ մ'ալ կայ, որ առաջիններուն այդ երկու գերագանց առաւելութիւններէն զատ, կրօնից յիշատակարանն ալ ունի վրան . եւ է մէկ, կամ թէ լաւ եւս ըսել եօթն եկեղեցի եւ ներքսափոր քարակտոր մատուռներ . որոց խոր միայնութեան մէջ ծածկուած մնաց երկար դարեր այն յանդուգն գեղարդն, որ մեր Փրկչին կողը պատռեց:

Կը գտնուին ի Հայաստան նաեւ, թէ եւ քիչ տեղ, մարմարիոն, ալապասդր եւ բիրեղ: Բայց իր քարահատից բազմակերպ տեսակներն իր հրաբլրդիսից բերքերն են, որոնք Այրարատայ հազարաւոր եկեղեցեաց շինութեանը գործածուած են, եւ որոնցմէ դեռ կանգուն են մնացած քանի մը հարիւր, ոմանք ամբողջ ոմանք կիսակործան, տասն, տասնեւերեք դարերէ ի վեր . ժամանակ՝ փոխանակ մաշելու այս դեղին, սեւ, գորշ եւ գոյնգոյն քարերը, կարծես թէ ալ աւելի կարծրացուցաներ է: Բոլոր Անիի եւ իրեն շրջակայիցը մեծամեծ շէնքերը այս քարերէն շինուած են . կան այնպիսի եկեղեցիք, որոնց շինութեան մէջ ափ մը կիր գործածուած չէ . թէպէտ եւ դիւրին էր այնքան կրային լեռներէն շաղախ շինել, բայց այսպիսի շինուածոց քարերը իրարու կապելու համար՝ երկաթի կամ կապարեայ ճանկեր եւ թիթեղներ կը գործածէին, եւ երբեմն զատոնք ալ զանց կ'ընէին:

Այս տեսակ քարերն բնականաբար իրենց ծնունդը մտքներնիս կը բերեն . այն սարսափելի տիտանները, որոնք երկրիս կողերը պատռելով մէկմէկ ծխաշունչ լեռ ձեւանալով կանգնեցան կեցան: Այն մարած հրաբուխներուն համար կ'ըսեն, որոնց մնացորդներն, ինչպէս նաեւ հանքային ջրոց առատութիւնն, մեր երկրին բնական կազմութեան մէկ նշանատր կերպարանքը կ'ընծայեն . եւ չեն գիտեր թէ կա՞յ արդեօք ուրիշ արշարիք մը՝ որ մերոյն պէս տակն ու վրայ հերկուած ըլլայ այն պղուտոնական ուժէն՝ որ այդ վիթխարի եւ սհատոր ելեւէջները դրոշմած է իր վրայ: Գաղղիոյ Օվէոնէի մէջ Տոմի մարած հրաբուխները, գաճաճներ են այն երեք չորս հազար մեդր բարձրութեամբ հսկաներուն քով, որոնք թէ՛ եւ շինած են՝ բայց գորութիւննին աւելի թմրած է քան թէ կորած բոլորովին . եւ իրենց ըրած աւերմանց հետքը, որ շատ երկար ատենուան բան չեն, անարատ պահած են: Մեր աշխարհքին մէկ զարմանալի ընդդիմերեւոյթն ալ այս է, որ եթէ պատմագրաբար նայելու ըլլանք՝ երկրիս ամենէն հին մասն է, եւ մարդուն բնիկ գաւառն, իսկ թէ որ երկրաբանօրէն քննենք՝ նորագոյն կազմուածներէն մէկն է . եւ վերջի ժամանակներուն մէջ շատ մեծ խլրտմունք եւ փոփոխութիւն կրած է: Հրաբուխներէն բազմաց բռնկիլը պատմական դարէ վերջը հանդիպած է, ինչուան կան ոմանք որ հազար հինգհարիւրէն, երկու հազար տարիէ վեր չեն ելլեր . եւ մինչեւ ցարդ յայտնի կը տեսնուին լաւայի գունագոյն հեղեղներն, որոնք անճոռնի օձերու պէս ոլորուած են այն հրաբուխից բերանացեալ վիին բոլորտիքը ու ստորտոնին: Նոյն իսկ իրենց վրայի թեփը, (եթէ նեարեն ինձ), երկրաբանք այսպէս ըսելու), ամենեւին կորուած չէ իրեն հին փայլմունքը, եւ մամոտն դեռ վրան քոս չէ կապած: Մեր նախնիք աւանդութեամբ գիտէին Մեծ լեռան փլչիլը, եւ Աւագ Մասեաց կողը մղոնաչափ մը երկայն բացուած խոր պատառուածքը: Այն դժոխսածեւ վիին չէ թէ միայն մեր ազգային քերթողները ապշեցուցեր էր իր ահարկութեամբը, հապա Պայտընի եւ Սումէի նմաններն ալ . վասն զի այս Ապոլոնի որդոց աշքերն, որ քան գերկրաբանիցն աւելի թափանցանց ու հեռատես են, գուշակեցին թէ Մասեաց ծոցը դեռ մեծ եռացմունք կան, որ եւ յիրաւի իսկ 1840 ին յանկարծ դուրս պոռթկաց արձրկելով ծուխի սեւ ալիքներ, շաղախ, քարեր ու ջուր, եւ բոլոր Այրարատայ դաշտը դողացընելով: Անշուշտ այդ միջոցին այն սրբազան գազաթանց վրայէն հեռացեր էր հրեշտակն Քնոյ, ուր որ մեր դարուս արձակաբանից հոմերոսն, Մարտիրոսաց երգիչն (Շաղոպրիան) աղուաբար հաներ կեցուցեր էր գնա: Վանայ լճին արեւմտեան գին եղող լեռանց մէկուն վերջին հրդեհումը 1441 ին կը յիշատակուի, իսկ Սիփան, որ նոյն լճին

հիւսիսակողմը վսեմ կոնաձեւով գրեթէ չորս հազար մեդրէ աւելի բարձր ցցուած է, դեռ ծծմբախառն թեթեւ շոգի մը կ'արձակէ . արեւելեան կողմը՝ Վարազ, օտար չէ պղուտոնական կազմուածքէ . իսկ լճին հարակողմը դեռ այս տեսակ նշաններ ստուգուած չեն ի ճանապարհորդաց . բայց Ժ դարուն վերջերը այդ կողմերը բնակող ճրգնատր մը, Գրիգոր Նարեկացին, Հայաստանի Ս . Բեռնարդոսը, իր տաղերէն մէկուն մէջ հրաբոլխային բորբոքման աղօտ նկարագրութիւն մը կ'երեւցնէ . ,Լերինաթինդ խոր վիհ ի վեր, ծափին ի նոյն շտապ ,յորձանից . Հրակոծ լերանց անձկին ի տապ բոցն ,ի ծաւալ ծով խոր հերձաւ . Ճապաղ ճեպով դարձ ,նոյն ի դարձ խաղայր փութայր ի տեսանելի: Արդէն մեր նախնիք Քրիստոսի թուականին առաջին տարիները այս լերանց մէկուն վրայ կը ճանչնային ,տուն կրակի, անյագ հրոյ, անդադար այրման աստուածոցն, եւ քարինս հոսեալ յակն յորդաբողխ ,աղբերն... քանզի վառէին գկրակն՝ քոյրն, եւ գաղբիրն՝ եղբայրն . թերեւս վասն պայծառութեանն կրակը այլաբանելով ի քոյր: Ուրիշ կողմանէ գիտենքոր աս ծովակիս ջրերը աւելի լեղի են քան թէ աղի մանամանդ եզերքները անանկ խառնուած են բորակային բաղադրութեամբ՝ որ կտաւները լուալու կը գործածեն: Իսկ Մեւանայ լճին՝ բնաւ տարակոյս չկայ հրաբոլխային կազմութեանը վրայ . կրնանք ըսել թէ հրաբոլխի խառնարանաց մեծագոյնն է, սեպացեալ եւ կոնաձեւ քարալեռներով շրջապատած, որոնցմէ տասուերկուքէն աւելին իրենց առանձին բաժակներն ունին ջրով լեցուած կամ պարապ: Ասոնց ետին կը բարձրանայ դէպ ի արեւմուտք վիթխարին Արագած (ռամկօրէն Ալակէզ), բոլորովին գատ առանձնակ, եւ Հայաստանի լեռներուն ամենէն լայնանիստը եւ ստոյգ չափուածներուն մէջ բարձրագոյնն՝ Մասիսէն վերջը, որուն հետ, ըստ Ռիդդերայ աշխարհագրային գեղեցիկ մտածութեանը, կը ձեւացնէ մեծ դրան մը երկու կամարակալները, ուսկից կ'անցնին Գանգիսի եզերքներէն դէպ ի Պոնտոս ու Կովկաս ճանապարհորդող ամենայն կարաւանք: Արագածու կատարը չորս գագաթ ճղքուած ու ցցուած է, որոնք իր խառնարանին եզերքը գիտակ կեցած են, եւ պայծառ ծծումբ ունին կողերնուն վրայ: Կ'երեւի թէ Քրիստոսի թուականին առջի դարերուն մէջ դեռ ասոր պատաստուածքներէն ծուխ կը ցնդէր . վասն զի ԺԴ դարու դիւրահաւատ մատենագիրներէն ոմանք կը պատմեն թէ լերան խորը քարանձաւ մը կայ, ուր մեր Լուսատրիչն մատուտ մը շինէր ու կանթեղ մը կախած է, որ ինչուան ի կատարած աշխարհիս վառ պիտի մնայ: Մօտերս բրուսիացի ճանապարհորդ մը Հայաստան հիւսիսէն հարաւ քալելու ատենը, երեք գիշեր

Ետեւէ ետեւ տեսեր է Այրարատայ լեռանց վրայ ցոլացեալ լոյս մը . տեղացիք ասիկայ սեպեր են հաւաստի նշան մը գետնաշարժի Պարսկահայոց մէջ, եւ յիրաւի նոյն օրերը Դավրէժ շարժ կ'ըլլայ: Այն նահանգը որուն շահաստանն է այս քաղաքս, միշտ Ատրպատական անունը կրած է, որ կը նշանակէ տեղի կամ աման հրոյ, եւ ունի, ուրիշ լեռներէն գատ, Սաւալանի հրաբոլխային սեպուիը, որ գրեթէ Սպիտակ լեռան չափ բարձր է: Բայց Հայաստանի եւ բոլոր յառաջակողմն Ասիոյ մէջ ամենէն կենդանի հրաբոլխի գօրութիւն եւ նշան ունեցող լեռն է Թանտըրէկ (գուցէթոնրակ կամ Թոնդրակ ըստ նախնեաց) իբր 10,000 ոտք բարձր, Պայէգիտ քաղքէն երեք կամ չորս փարսախս հեռի դէպ ի Վանայ ծովը, որուն գագաթը ամենեւին նման է Վեսուվի, բաժակը շատ ընդարձակ եւ խոր, յատակը մեծամեծ քարինք եւ բիրդացեալ ծծումբ, եւ շատ տեղէն անդադար ջրային եւ ծծմբային գոլորշիք կ'ելլան: Լեռան մէկ կողմը կայ ուրիշ բաժակ մ'այլ ջրալից . եւ անոր մոտ տեղէ մը մեծ շրջամաք աղբիւրաբար շոգի կ'ելնէ ուր կ'երթան բժշկութեան համար: Աւելի զարմանալի յատկութիւն մ'ալ է (Նարեկացոյն բառով ըսելով) լերինաթինդ որոտունքը, որ լեռան փորէն կու լսուի երբեմն երբեմն, եւ Ամերիկայի Անտեայց հրաբոլխից (պրամիտոս, պոռոշին) ըսուած ձայներուն կու նմանի: Ռուսք եւ Օսմանեանք իրենց վերջին պատերազմին ատեն՝ Պայէգիտու երկու կողմը բանակած, գիշեր մը յանկարծ որոտմունք լսելով՝ կարծեցին թնդանոթից ձայն, եւ մէկէն զինուած իրարու դէմ ելան . ինչուան որ իմացան բնութեան գաղտնիքը: Քանի՛ վսեմ եւ ահաւոր պէտք էր ըլլար Հայաստանի երեւոյթը քանի մը հազար տարի առաջ, երբ ներքին ծովերով ակօսեալ, յառաջակողմեան Ասիոյ բարձրագոյն տափարակին վրայանկուած հարիւրաւոր հսկայ հրաբոլխներէն, իբրեւ բնութեան լապտերներէ, բարկաճայթ բոցեր կը ծաւալէր այն նորածին ժողովուրդներու վրայ, որ դեռ անստոյգ քայլերնին շարժել կու սկսէին դէպ ի անձանօթ երկիրներ:

Դ

Անցնինք հիմա այս կնճռոտ կերպարանքներէն՝ անոնց բուն ծոցը, բայց ես չեմ ուզեր: Հայկակ, Պիսիդոնի երեքժանոյն հարուածներովը քեզի Պլուտոնի մթին գաղտնիքները ցուցնել . չեմ ուզեր եւ ոչ իսկ կրնամ դիմացդ դնել ինչ որ բնութիւնն ծածկած է իրեն ալուօրը մէջ, ուսկից աշխատասէր իմաստունն՝ հաւասար համբերութեամբ եւ ճարտարութեամբ ճոխացած՝ խողովակի մը

ձեռքով խաւարային անդունդներէն դուրս կը հանէ կը մղէ պիտանի ջուրը: Միայն Հայաստանի մետաղական հարստութեանը վրայ քիչ մը կ'ուզեն խօսիլ, եւ հոտ ալ նշանատր երեւոյթ մը պիտի տեսնես: Սկսինք ամենէն յարգի հրահալելի նիւթէն:

Չարմանալի բան մ'է որ ամեն մետաղէ առաջ յիշատակուած է ոսկին աշխարհիս առաջին մատենին մէջ: Աստուածաշունչ գիրք Եփլատայ ազնիւ ոսկին Փիսոնի ափանցը վրայ կը ցուցնեն, որ է Եդեմայ առաջին գետը, զոր կ'անուանենք Ճորոխ . այս գետոյս պատած երկիրն է, ինչպէս առաջ յիշեցինք, մեր Խաղտիքն էի Յունաց Խալիբս ըսածը . եւ թէ որ հիմա չի գտուիր հոն ոսկի, մի՛ գարմանար . վասն զի Մովսեսի եւ մեր օրերուն մէջ 3400 տարիէն աւելի անցեր է . բայց անտարակոյս կը յիշես Արգոնաւորդները՝ որ Մովսեսէն երեք կամ չորս դար ետքը այս կողմերս եկան ոսկի գեղմը յափշտակելու, զոր ես ալ կը հասկնամ ոսկեհանք . կը յիշես նաեւ որ քանի մը դար վերջը բանաստեղծներուն հայրն՝ արծաթաճոխ Ալիւրեայ Ալիզոները մէջ կը բերէ, զոր հիմակուան հեղինակք կ'իմանան Արմէնոխալիբք (Ճանիկ) եւ բուն Խալիբք (Խաղտիք) . այս բառս յունարէն կը նշանակէ հանք (երկաթի) եւ հանքերուն վրայ աշխատողները: Մինչեւ հիմա դեռ արծաթ կը հանեն հոն Կիւմմիշխանէի (Արծաթահանք) եւ Իսփիրայ մէջ, որ է մեր Սպերը եւ Ստրաբոնի Սիսփիրադիոն: Այս երկիրս իր ոսկեհանքովը ծանօթ էր նաեւ մեծին Աղեքսանդրի ժամանակ, որ մարդ դրկեց հոն ոսկւոյն համար, բայց տեղւոյն բնակիչներն վրանին վազելով սպաննեցին: Նմանապէս Չ դարուն մէջ այն կողմերը Փառանգի ոսկեհանքը հակառակութեան առիթ էր Սասանեանց եւ Բիւզանդեանց մէջ: ԺԷ դարուն ճանապարհորդներէն մէկն կ'աւանդէ մեզի, որ նոյն իսկ օսմանեան կառավարութեան ատեն ալ, Սպերի ոսկեհանքն կը բանէին, եւ ետքը ջրով լցուելուն համար՝ հարկեցան թողլու: Նոր ատեններս քանի մը երկրաբաններ ստուգեցին որ Կարնոյ լեռներուն կազմուածքն նման են Ալդայի լեռանց, եւ շտարակուսեցան որ հանքեր ալ պիտի ունենան, բայց աւելի չփնտեցին: Յիշելու է որ Կարնոյ գլխաւոր գեղերէն մէկն Արծաթի կ'ըսուի: Մեր հինգերորդ դարու ազգային պատմիչք կը խօսին Արարատայ ոսկեհանքերուն վրայ, առանց տեղը ցուցնելու: Հայաստանի Կուր գետով ոռոգուած հիւսիսային արեւելեան կողմը, գտեր են Ռուս վերակացուք թէ հանքաց եւ թէ գետոց մէջ ոսկւոյ քանակներ: Այս տեղերուն աշխարհագրական անուանց մէջ ալ շատ կան ոսկի նշանակողք: Նոյնը հաստատեցին նաեւ արեւմտեան Հայաստանի հանքերն . զոր օրինակ, անցեալ դարուն սկիզբը, Ռիդդէրի

ճանապարհորդութեան ժամանակ, Արգանայի մէջ ոսկի ալ կը հանէին: Արդէն յիշած արծաթահանքներնուս վրայ աւելցրենք Ատրպատականի եւ Քիրտիստանի մէջ յայտնուած հանքերը, որոնք բանուած չեն: Մահադի խալիֆային ատեն (775 785), ժամանակակից պատմագիր մը կը վկայէ որ Հայաստանի մէջ գուտ արծաթի լեռներ գտնուած են, բայց որոշ տեղը չի նշանակեր: Առատ են ի Հայս պղնձի հանքերն, մանաւանդ Գուգարաց աշխարհին մէջ, որ Գոգայ եւ Մագոգայ նախնական երկիրն է, վերին Կուրի հոսանաց վրայ . բովանդակ լերանց շարք մը Պղնձահանք անունը կը կրեն, եւ գործաւորներ միշտ կը բանին . նոյնպէս կը գտնուի պղինձ ի Ղարապաղ, Արգնի, Սպեր, եւ Մոկաց գաւառը ի հարաւակողմն Վանայ լճին: Երկաթն աւելի առատ է եւ զանազան տեսակ, մանաւանդ հարաւային Հայաստանի մէջ . յիշեալ լճին արեւմտեան հարաւակողմը կայ Երկաթահատք եւ Կապարահատք ըսուած լեռն: Կապարէն գատ Հայաստան կ'ընծայէ կամ կ'ընծայէր զինկ, մկնդեղ, գառիկ, անագ, եւ այլն:

Ե

Դառնանք հիմայ քննելու մեր երկրին երեսը եւ գործարանատր արարածները: Երկրին ձեւակերպութիւնն եւ կլիմայն, ինչպէս որ տեսանք, մեզի բարգաւաճ բուսաբերութեան մը յոյս չեն տար, մանաւանդ մեծամեծ եւ թաւ ծառերու: Պոնտոսէն ի Պարսկաստան գնացողն ճամբուն վրայ գրեթէ բնաւ չի տեսներ անտառ մը կամ բարձր ծառեր, այլ թուփեր, մացառներ եւ հազիւ ուրեք քանի մը ծառ մէկտեղ: Բասեն՝ Արարատայ մեծագոյն դաշտն՝ ուր Երասխ կը սկսի իր ընթացքը, ի հնուց Անփայտ կ'անուանէր . բնակիչք երկրին՝ փայտի տեղ իրենց տան վառելիքը անասնոց աւելորդօքը կը հոգան . բայց տուներնին ալ սովորաբար կէս ստորերկրեայ ըլլալով՝ բլրի մի կամ բարձրադիր գետնի մը կող թաղուած, ցրտէն կ'ապահովին: Քսենոփոնի տուած նկարագրութիւնն այս տներուն վրայ՝ յետ 23 դարուց հիմա ալ կը ստուգուի: Շիտակը խոստովանելով, փայտի պակասութիւնն ոչ այնքան բնութեան՝ որքան բնակչաց անհոգութենէն է . վասն զի նոյն հեղինակն եւ Կ . Կուրտիոս եւ այլք կը յիշեն ծառոտ լեռներ եւ տափեր՝ նոյն Երասխայ գեղեցիկ հովտին մէջ, զոր Հռոմայեցիք հաւանելով կը կոչէին Երասխեան դաշտեր (Campi Araxeni) եւ անկէ բարեբոյս չէին գտներ Ասիոյ մէջ . այնչափ մշակութիւնն մեր նախնեաց ատեն կրնար կոկել շտկել

գանհարթութիւնս բնութեան, եթէ այս գեղեցիկ դուստրս Արարչին՝ կրնայ անհարթութիւն մ'ունենալ: Հիմա ալ կը գտնուի անտառք ի Հայաստան . եւ այդ Անփայտ Բասենոյ մօտ՝ Սօղանլու լեռներն 20 25 փարսախս երկայն տեղ ծածկուած են պէս պէս տեսակ եղեւնեօք, սոճեօք եւ թեղօշիք, յորոց ոչ միայն բնակիչք կողմանցն, այլ եւ պետութիւնք Օսմանեանց եւ Ռուսաց փայտ կը կտրեն ի պէտս շինութեան ամրոցաց, որ Հայաստանի մէջ իրարու դէմ կանգնած են . (վասն զի Դ դարէն ի վեր աշխարհիս ողբալի բաղդ մը ունեցեր է՝ ըլլալու միջասահման, կռուատեղի եւ որս երկու նախանձորդ եւ դիմամարտ տիրապետաց): Այս լեռներէն կտրեց Հուլաղու դանի որդին իր Ապաղա բերդին հիմնարկութեան նիւթերը: Սօղանլու արեւմտեան կողմն են մայրետը լերինքն Տայոց, (Դասքի Հելլենաց) որք կռուեցան ընդ գնդին տասն հազար Յունաց, որոց առաջնորդ էր Սոկրատայ բարեկամն Քսենոփոն: Արեւելեան կողմն, մեր Միսական եւ Արցախ աշխարհներն մայրոտ եւ մացառոտ են, որոյ համար ալ հիմա Գարապաղ կ'ըսուին . (թերեւս Ար ցախ ալ նոյնպէս իմաստ մ'ընծայէ): Արեւմտեան կողմն՝ Բարձր Հայոց եւ Ծովաց միջոց շատ անտառներ կան, նաեւ կաղնեաց եւ ընկուզենեաց: Իսկ հարաւակողմն մեր երկրին, Տիգրիսի հովտին եւ Վանայ պարստափին միջոց, մանաւանդ այս ետքինիս հարաւային եւ արեւմտեան կողմերն, այնքան անտառոտ է, մինչեւ մեր նախնիք Փայտի աշխարհ կ'անուանէին Տիգրիսի եւ Վանայ անջրպետող լեռնավայր սահմանը: Նոր ճանապարհորդք այդ անտառաց մէջ գտան տեսակ տեսակ կաղնի ծառեր, որ ինչուան հիմայ անձանօք էին Եւրոպէացոց, եւ բերին իրենց երկիրը տնկելու: Այս անտառներէն կու գայ ազնուագոյն Գղթորն եւ Գազպէն, գոր օդոց մեղր կ'անուանեն կամ մանանայ . եւ անկէ՝ Տարօնոյ երկիրն, որ է այժմեան Մշոյ գաւառն, Մեղրաբողիս կ'ըսուէր: Այրարատեան լեռանց վրայ թխտենեաց պուրակներ կան ինչուան 7800 ոտք բարձր տեղեր, եւ գիհի ծառեր ինչուան 8200 ոտք բարձրութեան վրայ . իսկ թփատեսակ ծառեր՝ ալ աւելի բարձր կը գտնուին . մինչդեռ յԵւրոպէ ո՛ր եւ է աստիճանի տակ՝ այդչափ բարձր տեղ ամենեւին ծառ չգտնուիր: Գուգարաց երկիրն մեր նահանգաց ամենէն հիւսիսագոյնն, ամենէն ալ ծառոտ եւ շատաբոյսն է, իր խորանիստ դրիցն համար, Կուրայ գեղեցիկ պարահովտին մէջ . կարմիր եւ ճերմակ կնձնիք կ'աճեն հոն ընդ կաղնի, հացի, պտղի, եւ պէսպէս եղեւին ծառոց: Մեր Ե դարու օրինակագիր հեղինակն աշխարհագրութեան՝ կը յիշէ հոն տօսախի ծառն եւ հաճարածառ ալ: Նոյն հեղինակն (Մովսէս Խորենացի) կը յիշէ Արարատայ մայրաքաղաքին,

Արմավրայ, վսեմական սօսիները, որոց տերեւոց սօսաւիւնն՝ հմայից ազդումն էր մեր նախահարց . մեր ստեններս կարծուեցաւ թէ այդ ծառերուն մեծամեծ կոճղերը յայտնուեցան հողուն տակ՝ այն տեղուանք, ուր երբեմն կը մօտենար Երասխ, որ աւելի յեղյեղուկ քան զժամանակն՝ յետ քառասուն դարուց փոխեր է իր ալեաց ընթացքը եւ հեռացեր ի բնակարանէ որդւոցն Հայկայ: Այս տեսակ սօսիներէն դեռ հատ մը կենդանի է եւ ամբողջ հրապարակի մը կէս կը ծածկէ յՈրդուատ, հին քաղաք՝ մոտ քարավազիցն Երասխայ, բունն գետնէն երկու մեղր վեր տասն մեղր շրջապատ ունի: Կրնայկարծուիլ թէ արեւելեան սոսին սեփհական ըլլայ Հայաստանի . յայտնի է որ Հռովմայեցիք մտուցին այս ծառը յարեւմուտս:

Այս աշխարհակալ ազգին վրայ ընկնալով խօսքերնիս, յարմար կը սեպեմ յիշել հոս, որ իրենց աշխարհակալութեան լաւագոյն ստացուածներէն մէկն էր օտար երկրի բերքերն ընտանեցնել: Հայաստան ընծայեց անոնց ուրիշ բոյսերէ զատ զԾիրանն որ դեռ Իտալիոյ մէջ իր անուամբն արմենիա՛գա կ'ըսուի . եւ լատիներէն *malns armeniaca* (մալուս արմենիագա), այսինքն հայկական խնձոր, որ կ'երեւայ թէ նոյնն է զոր Պլինոս սալորոց մէջ կը դասէ, եւ անուշահոտութեանը համար նախադաս ի սալորս: Ի՞նչ ըսենք Հայոց Խնձորոյն համար, որ այնպէս անուանի էր Արաբացոց մէջ, մինչեւ իրենց բանաստեղծներէն մէկն՝ արշալուստյ մէկհատիկ նմանութիւն կը գտնէր օրիորդ մը՝ հայկական խնձոր խածած: Ընդհանրապէս սովորական համեղ պտուղք առատ են մեր երկիրը, եւ ամեն տեսակն ալ կը գտնուի, բաց ի թզոյ եւ ի ձիթապտղոյ, սակայն ասոնք այլ հարաւային եւ ցած կողմեր անծանօթ չեն:

Իսկ մահացուաց ամբրոսեան օշարակ տուող ծա՞ռն . որթն՝ առաւել քան զհասարակաց կարծիս կը յաջողի ի Հայաստան, որովհետեւ բուսաբերութեան սահմանագիծն շատ բարձր է ի Հայս, երկիրն կը բերէ աղէկ խաղող, որոյ եւ առաջին հայրենիքն ալ եղաւ յետ ջրհեղեղին: Երասխայ պարահովտին մէջ ընտիր այգիներ կան . եւ Երեւանայ գինին նարընջագոյն, քաղցր եւ մշկահոտ՝ Սպանիոյ, Ունկարիոյ եւ Պուրկոնեայ լաւագոյն գինեաց հաւասար կը սեպուի: Անվարժից խրատ կու տամ Գանձակայ գինին շատ չփորձել, որ թէ եւ անուշահամ՝ սաստիկ զօրաւոր եւ գլխահար է . իսկ Գարապաղի գինիներն անյոշ եւ գրեթէ եղոտ են: Տապանակիր լերան վրայ, յԱկոռի 4000 ոտք բարձր

տեղ մը, յանյիշատակ ժամանակաց՝ այգի կը մշակէին ի յիշատակ այգեգործութեան Նոյի, այն լեռան բլրոց մէկն հին ատեն Գինոյ բլուր կ'անուանէր, վտակ մ'ալ Գինեգոյն գետ: Վանայ պարատափն ալ ինչուան 1700 մեղր բարձրութեան վրայդեռ այգիներ ունի որ երկայնողկոյց խաղող կու տան, բայց չեն համով ինչպէս Արարատայն: Կարնոյ բարձրաւանդակն ոչ այգի ունի եւ ոչ պտուղ . որոնց պակասութիւնը կը լեցընէ իրեն ճորոխայ հովտին Թորթում վիճակն . բայց անոնց փոխարէն կը բերէ ազնիւ արմտիք . իսկ Սեւանայ պարատափն աւելի բարձրագոյն ըլլալով՝ ասոնցմէ ալ գուրկ է: Տորենն ընդհանրապէս ընտիր է, եւ կայ մեծահաստ տեսակ մը, որ եւ շատ կաշուն կամ առածիգ խմոր կու տայ: Ո՞ր ազգային պատմագէտ չի յիշեր «արգաւանդ եւ բերրի... Շիրակայ ամբարքն: Ուրիշ տեսակ արմտիք ալ լաւ եւ առատ են: Իսկ բանջարեղէնք եւ խաւարտք, թերեւս ամեն տեղէ աւելի պատուական եւ բազմատեսակ . 300 տեսակէն աւելի կը համրուին բնիկ տեղական անուամբք:

Հայկական Փլորայն շատ հոգ չունենալով պարտիգաց եւ ջերմանոցաց, աւելի վայրենի ու խոպան տեղուանք կը սիրէ . իր լեռնային բուսաբերութիւնն պէտք է բուսասիրաց համար շատ հետաքննելի ըլլայ:

Վերջին սահման բուսաբերութեան ի Հայս 4000 մեղրէն աւելի վեր է, անկէց ալ բարձր՝ միայն մեծին Մասեաց վրայ կը գտնուին գեղաստղիկ (*aster pulchellus*), մկնամիրգ քնքոյշ (*astragalus mollis*) կանթեղնիկ քարաբոյս (*capanula saxatilis*) եւ այլն: Հոչակաւոր բուսաբանն Բիդոն Դուոնըֆոր՝ որ անցեալ դարուն սկիզբները կը ճանապարհորդէր ի Հայաստան, չէր դժուարէր դրախտին նշանները տեսնել ի Կարին եւ յԷջմիածին, այնքան գմայլած էր այն կողմերուն հարուստ եւ գեղեցիկ բուսաբերութեան վրայ: Հիմակուան բուսաբանք եւ շրջագայիկք թէպէտ եւ այդչափ չեն գմայլիր, բայց տժգոհ ալ չեն: Ասոնց նշանած ծաղկանց մէջ, չեն գիտեր ո՞ր ցեղին մէջ դասելու է Աղբերաց արին ըսուած գեղեցիկ ծաղիկն փոքր եւ վարդածեւ, եւ այնպիսի վատկոուն թանձր կարմիր գունով՝ որուն նման մը չեն գտած ականատես վկայք . թերեւս աւելի դիւրին հնարք մը գտած է մեր միջին դարու գուսանաց մէկն, իր սիրելոյն նմանցընելով այդ ծաղիկը:

«Ա՛յ աղբերաց արուն՝

Որ բուսար մէջ քարերուն,

Աշուիդ ի նարկիզ նրման,

Մէկն ի քուն ու մէկն արթուն»:

Ինչպէս անունն եւ երգիչն կը յայտնեն՝ այս ծաղիկս սովորաբար կը գտնուի աղբերաց եզերք քարերու սորեր . եւ անշուշտ եթէ ծանօթ ըլլար հիներուն՝ Ովիդիոսի այլակերպութեանց գեղեցկագոյն նիւթ մը կ'աւելցընէր:

Պէտք չէ մոռնալ խոտերը եւ բժշկական բոյսերը, զոր Հայաստան կ'ընծայէ, եւ հին ատեն ատելի ալ առատապէս կ'ընծայէր դեղագործաց . գրեթէ բոլոր Գալիենոսի եւ Էպուսինայի գործոց մէջ յիշուած եւ հայերէն թարգմանուած բոյսերն՝ իրենց բնիկ ազգային անուններն ունին մեր լեզուին մէջ . ըսել է որ մեր երկրին մէջ ալ ծանօթ էին: Ի գբօսանս բանասիրաց յիշենք զՄանրագորն եւ զՓէնունա, որոնց՝ հայկական Եսկուլապեայ հետեւողքն՝ զարմանալի յատկութիւններ եւ կերպարանք կ'ընծայեն: Չմոռնանք հոշակաւոր Համասպրամն կամ Համասփիւռն ալ, որոյ ցողունն 12 ճիւղ կը բաժնուի կ'ըսէին եւ ծաղիկներն զանազան գոյն ունին մէկմէկէ պայծառ . այս բոյսս քարոտ լեռանց սորերը ծածկուիլ կը սիրէր, եւ որոշեալ որ մը յայտնուէր գիշերանց լուսնի լուսով . շատ տեսակ գօրութիւն ունէր, ինչուան սրամտութիւն ալ կը պարգեւէր, եւ հեղինակ մը վկայեր է պարզամտութեամբ թէ այս բոյսս ,գտայ, եւ չարն փորձեցի, երանի՛ է նմա որ գբարին գործէ»: Հռովմայեցիք Հայաստանէն եւ Պարսկաստանէն մեծ փափագով եւ ոսկոյ կշիռքով կը գնէին լաղերբիցում կոչած բոյսը, որ հաւանօրէն է սպան ըստ մեզ, եւ անոր խէժն՝ անգուժատ, թէ եւ չարահոտ, գուցէ եւ հայկական ազնիւ խաշնդէղն ըլլայ:

Մեր երկրին անուանի եւ անծանօթ բուսոց մէջ յիշենք ազգայնոց՝ փնտռելու հայկական ընկոյզ ըսուածը, որուն կուրք Ղփտիներուն օրացուցին մէջ նշանակուած էր յունիս ամսուն, եւ կ'ըսուէր թէ ձիթապտղոյ նման է . (մի՞թէ փշատին է, որ շատ հասարակ եւ սեփհական է Հայաստանի, կամ ծուաղենին): Յետին կարգ բուսեղինաց Խոտք եւ Մէղք անուանի են ի Հայս վասն ընդարձակ մարդաց եւ արօտից, որ տարուէ տարի կը սնուցանեն միլիոնաւոր ոչխարներ, եւ կը դրկեն ատելի դէպ ի հարաւեւ յարեւմուտս ի Ստամպոլ: Այս մարմանդքս եւ արօտքս հազարաւոր տարիներէ ի վեր կը քաղեն կը բերենի Հայաստան բազմութիւն հովուաց շրջակայ կողմերու եւ վրանաչու տոհմեր շատ հեռու

աշխարհքներէ: Խոտերու մէջ դասենք տեսակ մը սեզ հայկական (բիմբինելլա pimprenelle), կամ մանաւանդ ճահճաց մատնիկ (daetylus litoralis) որ կը սնուցանէ ամենէն ընտիր եւ ամենէն հին ճանչցուած որդն կարմրոյ, հոշակեալ իր շատափյալ գունովն, որով թագաւորաց ծիրանիք եւ հրովարտակք կը ներկուէին, գոր կը յիշէ եւ Դիոսկորիտէս: Արաբացիքիբենց տիրապետութեան ատեն այս որդը կամ կարմիրը մտուցին յԵւրոպա, հիմա Ռուսք անկէ շահ կը քաղեն . եւ դեռ Էջմիածնի կաթողիկոսաց կոնդակներն կը գրուին այս Արարտայ նշանաւոր բերքով, որուն նմանը յԵւրոպա կը գտնուի միայն ի Լեհս, եւ յԱմերիկա՝ ի Մեխիգոյ . ուրիշ ամեն ցեղ որդերն կարմրոյ (որոց յիսունի չափ տեսակ կայ) շատ արժէք չունին:

Ձ

Այս պզտիկ որդը մեզի առաջնորդ առնելով՝ բուսական ցեղապետութենէն անցնելու ի կենդանականն, բնականապէս նախ իր կարգին կու գամք . եւ անտարակոյս կրնամք գտնել Հայաստանի մէջ քանի մը նորատեսակ միջատներ եւ մանաւանդ պատենաթեւ ցեղէն: Գերմանացի բնագէտ ճանապարհորդ մը հազարաւորներ ժողոված է ասոնցմէ եւ իր աշխարհին գանազան բնապատմութեան հաւաքարաններու բաժներ է: Իր հայրենակցաց մէկն այլ Հայոց արեւելեան նահանգաց մէջ կը նշանակէ տեսակ մը մեծ ճպռան, որ իր ճռուողմամբ կրնար մրցիլ Թեոկրիտեայ սրնգափողից հետ: Այս կարգի կենդանեկաց թագուիին Մեղուն, կ'ընծայէ մասնաւորապէս յԱյրարատայ եւ ի հարաւակողման գաւառս՝ իր պատուական վաստակը, որ մեր երկրին գլխաւոր վաճառոց թուակից է: Շերամ որդոյ դարմանն շատ հին չէ մեր երկրին մէջ, հիմա կը յաջողի Կազբիականին մօտ գաւառաց մէջ: գաւառս՝ իր պատուական վաստակը, որ մեր երկրին գլխաւոր վաճառոց թուակից է: Շերամ որդոյ դարմանն շատ հին չէ մեր երկրին մէջ, հիմա կը յաջողի Կազբիականին մօտ գաւառաց մէջ: Ուրիշ եւ բարձրագոյն կարգ մը կենդանեաց, Ձկանց, արժանի է մտադրութեան, թէ եւ մեր աշխարհն շատ քիչ կամ թէ բնաւ չունի ծովեզերք: Լուդին (Saumon) մարդաչափ մեծութեամբ՝ Կազբից ծովէն գալով վեր կ'ելլէ Երասխայ եւ Կուրի մէջ, եւ այնքան առատ՝ որ միայն ձուերը կը հանեն ազնիւ աղկիթ (քավեար) շինելու համար, եւ միսը կը թափեն: Հայաստանի ամենէն հասարակ եւ ծանօթ ձուկն է Կարմրախայտ, որ ամեն գետոց աղբերականց մէջ

կը վխտայ, եւ ինչուան Եփրատայ 9000 մտք բարձր ականց մէջ, ի Կարին: Երասխ կը բերէ երկայնաձեւ Ճանառը, եւ թանձրամարմին Լոքը, որ Եփրատայ եւ մանաւանդ Արածանոյ մէջ շատ վիթխարի մեծութեամբ կը գտուի եւ նհանգ կ'անուանի, իբրեւ կէտ ձուկն: Նոյն տեսակէն կարծուի թէ գտուին Հառչակայ փոքր լճին մէջ, որ շատ ձկնոտ է . մինչդեռ անոր մօտ՝ Վանայ աղի ծովն՝ որ մեծագոյն է քան զամենայն ծովակս յառաջակողմեան Ասիոյ, եւ անոր համար կոչուի ծով Աղթամարայ (յանուն գլխատր կղզոյն), միայն մէկ տեսակ բնակիչ ունի, պզտի ձուկ մը, տառեխ . որ պատուական սնունդ կ'ըլլայ եւ շահաբեր վաճառ մը, վասն զի աղած եւ չորացուցած կը դրկեն չորս կողմի գաւառները, ի Քրդաստան եւ ի Պարսկաստան: Սեւանայ անոյշ ծովակն որ փոքր է քան զԱղթամարայն եւ բարձր քան զայն (6500 ոտք յերեսաց ծովու), ըստ աւանդութեան բնակչաց եզերացն՝ 12 տեսակ ձուկն ունի: Ուրիշ լճակ մը այրարատեան լերանց պարուն ստորոտը, Կոգայովիտի շամբն, որ հիմա Պալըզ կէօլ կը կոչուի ձկանց առատութեամբ, տարեկան միլիոն մը ֆրանգի շահ կրնայ տալ . անոր համար Ռուսաց եւ Օսմանեանց յետին սահմանաշափութեան ատեն՝ վիճի առիթ մը եղաւ: Հիմա թողլով ձկնասիրաց քննել Հայաստանի գետերուն մէջ այն մահահամ սեւ ձուկը՝ գոր կը յիշէ հին պատմիչն Կտեսիաս, կ'ուզէի որ մեր տեղագնինք աչք մը տային ի վերայ բովանդակ ջրոց՝ որ Հայաստանի մեծ եւ փոքր լճերը կը ձեւացնեն, եւ իրեն նշանատր կերպարանք մ'այլ կու տան: Աղթամարայ ծովէն շեռացած՝ պէտք է դիտել Որմեայ լիճը կամ Կապուտան ծովը, որ առաջինէն աւելի երկայն է, թերեւս աւելի այլ ընդարձակ: Այս երեք յիշեալ մեծամեծ լճաց հետ չորրորդ մ'այլ՝ Ծովակն Հիւսիսոյ՝ որ հիմա Չըլտըր կէօլ կ'ըսուի, յարեմտեան հիւսիսակողմն Հայոց, մեր երկրին երեսաց վրայ՝ տրամանկին մը կը ձեւացնէ, եւ կենդրոննին կան երկոտասնեակ մը մանր լճակաց: Յարեմտակողմն հարաւոյ՝ բաց ի Ծովք (Կէօլճիկ) լճէն, կայ բազմութին լճակաց այն լեռներուն վրայ՝ որ ասոնց պատճառաւ Պին կէօլ կը կոչուին: Հայոց մեծ ու փոքր քառասնի չափ լճերուն միահամուտ տարածութիւնն կրնայ 10,000 հեկտար հաշուիլ: Ընդհանրապէս այս լճերուն ափունքն նուագեալ բուսաբերութեամբ, դրից զանազանութեամբն եւ վսեմական տեսարաններով գերազանցեն քան զլիճս Չուիցերեաց . բայց ամենէն գեղեցիկ եւ վառվռուն տեսարանն իրենց թեւատր բնակիչներն են: Թերեւս չկայ երկիր մը որ այնքան բազմաթիւ եւ բազմազան ջրային թռչուններ ունենայ, ինչպէս Հայոց լճերն եւ մօրերն: Այս ետքի տեսակ ջրշեղջից մէջ անուանի է Կարնոյ շամբն կամ մօր եւ

ծով (սաղլըզ), որոյ թռչնոց հաւկիթներն բաւական էին շրջակայ գեղերու բնակիչները կերակրելու, ըստ վկայութեան մեծի պատմչին մերոյ, որ կարծեմ քեզի չափազանցութիւն մը կ'երեւնայ . բայց ի՞նչ պիտի ըսես տեղւոյն անգղիական հիւպատոսարանին եւ վաճառական գործատանց զբօսասէր պարօններուն վկայութեանը, որք կը հաւաստեն թէ տարւոյն կենդանաբեր եղանակին մէջ՝ չամբին բոլորտիքն մինչեւ բաւական հեռու միջոց՝ գրեթէ անընդհատ կը ծածկուին հաւեղինաց երամներով, մինչեւ համարձակ ձիագնացութեան արգել ըլլայ: Այս դաշտիս մէջ (Կարնոյ) համրած են աւելի քան 200 տեսակ թռչնոց շատն ջրային: Գրեթէ բովանդակ թռչնական ցեղից չորսին երեքն ճանչցուած են ի Հայս, մանաւանդ բարձրասրունք, մաշկոտունք, ճնճկկաց ցեղքն, եւ գիշահաւք, այս ետքի ցեղիս մէջ արժանի են յիշման լաշհան, որ է գառնակեր մեծ անգղն (գոնտու), եւ Սպերոյ ու Արարատայ բազայք, որ շատ ճարտար են յորսալ իրենց դասակիցները, աղէկ վարժածներն ինչուան 200 ֆրանգ կ'արժեն: Որսոյ կամ վայրի հաւուց մէջ նշանելի են մեծ կաքան՝ նման հնդկայնոյն, եւ ուրիշ տեսակը կաքաուց, սարսարեկք (decasse, մէզմէնտիկ), աքար (be'cassine), աքլոր (ra'le), թանձր (outarde), սալամբ (francolin), հասարակ փասիան եւ լոր: Ջրահաւուց մէջ զանազան տեսակք վայրենի սագի, բադի եւ կարապի, հաւալուան կամ ջրխոթան, արօր (morillon), հողամաղ (harle), որոր (mouette), եւ շնորոր, լուղիկ (plongeon), տեսակ տեսակ տառեղանց (he'ron) եւ ծիծռանց ջրայնոց . ցեծ կամ քաջահաւ կանաչ եւ սեաւ (ibis) . եւ երկու աշխարհածանօթ պանդուխտքն, կոունկ եւ արագիլ, որք ինչպէս առ օտարս՝ այսպէս եւ ի Հայս մասնաւոր պատիւ ունին: Մեր հին թագաւորք բաց յընդհանուր որսապետէն (Որսապետն արքունի) ունէին եւ հաւորսութեան վերակացուս եւ թռչնապահս, եւ թերեւս ասոնք էին Հաւնունիք . ոչ սակաւ տոհմք եւ ցե՞ապետք թռչուններէ առած էին իրենց անունն, ինչպէս Արծրունիք, Բագէակալք, Կարապունիք, Աղանունիք, Կոունիք, եւ այլն . եւ այս թռչունները կամ ողջ եւ կամ պատկերնին դրօշներու վրայ կրէին ազգային տօնից մէջ, որոց սկիզբն շատ հին է, թերեւս ոմանց ելնէ մինչեւ ի ջրհեղեղ: Այս մեծ պատահարս երկրիս ուրիշ կողմը այնքան զգալի այլայլութիւն եւ պատմութեան մէջ յիշատակ չէ թողած՝ ինչպէս մեր աշխարհը . եւ արդեօք այս թռչնոց հեղուկ բնակարաններէն ոմանք՝ գոր յիշեցինք, մնացորդ չե՞ն այն մեծ հեղեղմանն, որ քիչ շատ հողագնտին օրէնքները այլափոխեց: Ստորին Կուրայ ողողակքն, Երասխայ հովտին մրրանիստ հողակարգքն՝ բաւականապէս չե՞ն ցուցրներ թէ ատեն մը (որ

երկրաբանօրէն շատ հին չէ) ներէիդաց իշխանութեան տակ էին . եւ իրենց բրածոյ ժժմակաց մնացորդքն, որոց կենդանի նմանիքն դեռ գտուին կասպիական ծովու մէջ, չե՞ն կարծեցըներ արդեօք թէ երբեմն ծով մը կ'երկընցընէր իր ծաւալծփիկ բազուկները առ ուրիշ ծով մը՝ այն երկրին վրայէն, որ յետոյ եղաւ խանձարուրք մարդկութեան եւ հայրենիք Հայութեան: Հայկակ, ես ոչ երկրագէտ եմ եւ ոչ հաւագէտ, բայց կը հաւանիմ թէ այդքան բազմութիւն եռակենցաղ կենդանեացոյ (թռչնոց) որք մեր երկրին բարձրաւանդակ աւազանաց վրայ սփռեալ են, ոչ միայն բնապատմութեան ուսումնական ապացոյց մ'են, այլ եւ յիշեցուցիչք ջրհեղեղի եւ ստեղծագործութեան:

Է

Դառնանք առ ուրիշ դաս մը կենդանեաց: Մեք հայկական քառոտանեաց նախայիշեալ դասին պէս բազմատեսակ չեն, երկրին կլիմայն այլ այս բանս կ'իմացընէ: Բայց այսպէս ըլլալով՝ դեռ ոչ շատ հին ժամանակ գտուէին ի Հայս ամենէն կատաղի գազանք ալ . ո՞վ ոչ յիշէ Վիրգիլիոսի գեղեցիկ տողը . «Եւ վագերըս հայկականս՝ ուսոյց Դափնիս լրծելկառաց»: Կամ Միդոնիոսի ըսածը . «Ընդ վագրաբեր Նըպատայ կապարճատր արտորայս»: Դուռնըֆոր այլ Մասիս լերանց պատառուածներուն մէջ տեսեր է վագրը: Իսկ կենդանեաց թագաւորը, առիծը կու յիշէ ի Հայս Այետիոս, եւ մեր պատմիչքն Դ եւ Ե դարուց, եւ ուրիշ մ'այլ որ Ժ դարունսկիզբները կ'ապրէր: Ընձառիծն եւ յովագն ինչուան հիմա կը գտնուին: Թողունք յիշել ուրիշ գազանները, եւ գազանամարտ գազանը, այսինքն շունը, որուն ցեղէն կան մեծամեծ եւ ուժով տեսակք . չմոռնանք միայն երկայնամագ կատուն Վանայ, որ Անկիւրիոյ կատունէն վար չի մնար, եւ ճերմակ ու սեւատուտն աքիսը, զոր Լատինք առմէնիոս կոչէին (փռանկք էրմին be'rmine . Իտալիք՝ արմէլլինա), եւ այդու կոչմամբ կ'իմացընէին թէ ո՞ր երկրէ առին ու մտուցին յԵւրոպա: Ընտանի անասունք բարեբաղդաբար շատ բազմաթիւ են ի Հայս . վերը յիշեցինք ոչխարաց առատութիւնը . նախրէից ցեղին մէջ գոմէշն բնիկ կ'երեւի Հայաստանի, որովհետեւ իր էզը յատկապէս մատակ կ'ըսուի, որ ամենայն չորքոտանեաց էզը կու նշանակէ հասարակօրէն: Երեւմայրին կամորսի կենդանիք աւելի առատ են . հնագոյն դարերէ ի վեր՝ շրջաբնակ իշխանք եւ ազնուականք կու գային ամեն տարի ի Հայաստան՝ ի կրթութիւն եւ ի զբօսանս որսոյ, ուր գտուին տեսակ տեսակ վիթք, այծեմունք եւ եղջերուք, որոց կարօտով

կու բաղձայր նաեւ մահուան անկողնին մէջ Արտաշէս, մեր հեթանոս թագաւորաց մէկն, եւ հառաչէր . «Ո՞ տայր ինձ «զծուխ ծխանի եւ գառաւօտն նաւասարդի, գվագելն «եզանց եւ գվագելն եղջերուաց . մեք փող հարուարք եւ «թմբկի հարկանէաք»: Յիշենք գվարագն այլ, որ ինչուան հիմա Այրարատայ մէջ եւ նոյն իսկ Մասեաց ստորոտը կը գտնուի, Թաթարաց մշակած բրնձի անդերը արըրշտկելով . եւ երագավագ ցիոր (իշավայրի) որ հալածեալ յԱրտաւագդայ՝ յորդոյն Արտաշիսի, զինքը ետելէն ձգեց ինչուան նոյն աշխարհաձանօթ լերան վիհը . ուր, ըստ առասպելեաց, թշուառ թագաւորն՝ Քաջաց ձեռքով կապկպած, կու ջանայ կոտրելու իր երկաթի շղթաները, զոր անդադար լիզելով մաշեցրնեն իր հաւատարիմ շուներն . մագ կու մնայ որ բարկաճայթ թագաւորն ազատած ցատքէ այդ մթագին քարայրէն դուրս՝ բոլոր աշխարհքս աւերելու . բայց դարբնաց կռաններուն եւ ուրիշ գործաւորաց գործեաց ձայնն՝ նորէն կու հաստըցրնեն իր մաշած շղթաները: Գրաստեղէն կենդանիք հոշակուած են նաեւ մարգարէի մը բերանով, իր Տիրոսի դէմ ըրած սպառնալից ձայնարկութեանը մէջ . «Ի տանէ Թորգոմայ «ձիովք եւ հեծելովք եւ ջորովք լցին գվաճառս քո»: Եզեկիէլ (ԻԷ . 14) չի յիշեր ուրիցջ ցեղակից գրաստ մ'ալ, աւելի պզտիկ եւ աւելի անպարծ, բայց ոչ պակաս պիտանի, մանաւանդ ի լեռնոտ երկիրներ, ինչպէս է մեր Մոկաց աշխարհն, որոյ իրեք գաւառք Իշոց անուամբ կը կոչուին: Իսկ մէկալ կէս արուեստահնար կենդանին, ջորին՝ բնականապէս աւելի յարգի էր . մանաւանդ ճերմակ ջորին, զոր արեւու գոհ ընելու եւ թագաւորաց ծառայութեան համար կ'ընտրէին . ինչուան նաեւ թագաւորաց յողարկաւորութեան համար այլ գայն գործածէին . մեծին Տրդատայ ոսկեզօծ դագաղը կրող կառքն՝ ճերմակ ջորիներէ լծուած էր: (Ճերմակն, գերագոյն գունոց սեպուած, մեր թագաւորաց մահուան հանդիսին մէջ այլ մտնէր . այս հանդէսներուն վերջինը տեսաւ Բարիզ՝ յամին 1393ին յետոյ Հայոց թագաւորին, Չ ԼԷոնին մահուամբ եւ թաղմամբը . իր դագաղաց մահիճն այլ ճերմակ բեհեզ էր, իր ծառաներն ալ ճերմակ հագուած, տարին իջուցին գնա Կելեստինեաց եկեղեցոյն ներքնայատակ տապանատունը): Բայց ահաւաղիկ գրաստական ցեղին թագաւորն, զոր ամենէն պերճախօս բնապատումն անուանեց «գեղեցկագոյն ի ստացուածս մարդկան», եւ զոր մեր ազարակային արուեստին կամ Վաստակոց գրոց հեղինակն կոչէ, «Աթոռ թագաւորաց եւ պարիսպ «ամրութեան հեծելորաց, յաղթահարող թշնամեաց «եւ նաւահանգիստ ճանապարհորդաց, հալածիչ «գաւառաց, դորդեցուցիչ քաղաքաց եւ լայնացուցիչ «սինոռաց»: Բայց ո՞վ է առաջին կտրիճն՝ որ այդ

գեղեցիկ ստացուածն ըրաւ: Չեմ հարցրնէր Յովբայ, եթէ «Դ-ո՞ւ ազուցեր ձիոյ գօրութիւն, եւ զգեցուցեր «գահ ընդ պարանոցաւ նորա» . այլ կու հարցրնեմ, ոչ առանց քիչ մի պարծենալու . ո՞վ է որ ամենէն առաջ կրցաւ սանձ անցընել այն կենդանւոյն, որ երբեմն փորատող հրաքուխ կու դառնայ, երբեմն քծնող ընկերակից: Մեր պատմութիւնն, (եթէ կ'ուզես ասանդութիւն սեպել, եթէ կ'ուզես խորհրդաբանութիւն, ինչ այլ կ'ուզես սեպել), մեր պատմութիւնն կ'ըսէ, թէ աշխարհքիս առաջին պատերազմին մէջ, յետ խառնակութեան լեզուաց, մեր ազգին նահապետն եւ գօրավարն, Հայկն, ձիաւոր պատերազմող այլ ունէր ընդդէմ Բելայ . ասիկայ այլ յաղթուած եւ մեռած՝ յաղթողին ձեռքը թողուց ձիոց, ջորեաց եւ ուղտուց երամակներ: Ձին եղած է եւ է իսկ հիմա ալ Հայաստանի ամենէն նշանաւոր բերոց մէկն, եւ իր փառաց գործիք մը . մեր ազգային գինուորութեան ոյժն գլխաւորապէս հեծելոցը վրայ էր . Արամ Հայկայ սերնդոց մէջ ամենէն հգօրն, ժամանակակից Նինոսի, 40,000 հետեւակաց հետ 2000 ձիաւոր ունէր . ժամանակն փոխեց այս համեմատութիւնը . 12 կամ 14 դար վերջը՝ Հայաստան կրնար, ըստ վկայութեան Եզեկիելի, իր պէտքը լեցընելէն զատ՝ ինչուան Տիրոսի վաճառքներուն ալ դրկել ձի եւ ձիաւոր, երկուքն այլ անուանիք ի հին ժամանակս: Նոյն մարգարէն ուրիշ խօսքով մը գրեթէ զմեզ կ'ապահովէ թէ Ասորեստանեայց բանակը յաղթութեան տանողը Հայոց հաճելագունդն էր: Հայ ձիաւորք ճակատեցան Տրովայ դաշտերուն մէջ ծերունւոյն Պրիսմու վերջին որդոց հետ՝ ընդդէմ հոմերական քաջաց Յունաստանի: Աքեմենեան (Պարսից) տիեզերակալութեան ատեն՝ Հայաստան կու դրկէր թագաւորաց թագաւորին ամեն տարի միհրական տօնին 20,000 ձի, որ ընտրելագոյն սեպուէին քան զՊարսիցն եւ զՄարաց . եւ 50,000էն աւելի նժոյգք տարւոյն յարմար եղանակին կը ժողովէին Մուղանու դաշտերուն մէջ: Մեր թագաւորաց մէջ ամենէն աշխարհակալն եւ ամենէն գոռոզն եւ հպարտ, Տիգրան, ըստ բանից օտար պատմչաց ինչուան 150,000 ձիաւոր ունէր, զատ 17,000 բոլոր սպառազէններէ, այսինքն ձի եւ ձիաւոր բոլորովին գրահով ծածկեալ, զոր պատմիչ մը կը նմանեցընէ գրահամորթ կոկորդիլոսի: Արձակ դաշտի մէջ՝ այս սպառազէնքս ճարտար առաջնորդի մը ձեռք՝ գրեթէ անյաղելիք էին, բայց նեղ տեղուանք՝ թէ իրենք իրենց արգելք եւ թէ իրենց ետեւը շարուած գնդերուն, այսպէս Տիգրանայ բիրաւորներն ընկրկեցան զարնուեցան Լուկուլլոսի լեզէոններէն, որ հնարագիտությամբ զանոնք թերմոպիլեան նեղուցի մը մէջ փակեց: Հիմա Քիրտերն որ Հայոց ժառանգութիւնը կը վայլեն եւ կը վատնեն,

տարուէ տարի 50,000էն աւելի ձի կը վաճառեն Պարսից եւ Օսմանեանց: Հայկական, երիվարն, հին ստեն ամենէն աւելի ծանօթ եղած կ'երեւի, յետ տաճիկ (արաբացի) ձիոյ, մէկ հին եւ անանուն յոյն հեղինակ մը՝ նկարագրութիւն մը ընելով ձիոց՝ ըստ աշխարհաց, նախ եւ առաջ կը յիշէ հայկական երիվարը, եւ կը ճանչնայ գայն բաւական յաղթանդամ եւ շատ ուժով, ողնալայն եւ պնդակող, եւ Յովբայ ձիոյն պէս սաստիկ խրխնջացող: Հայկական երիվարին հետ կը յիշէ գփոփագահին . եւ այս երկու ձիոց ազգէն սերած կը համարի գալմատացի երիվարը: Ինչուան հիմա այլ հայկական ձին թերեւս նախապատիւն է յետ արաբացի եւ անգղիացի ձիոց, յիրաւի չունի որ ստոնց հասակը եւ ոչ վայելուչ ձեւը, աւելի պզտիկ եւ աւելի թանձրամիս է, բայց երագութեամբ անոնցմէ վար չի մնար, եւ անոնցմէ աւելի պատուական է վարժութեամբն ելլելու եւ իջնելու լեռնոտ եւ անհարթ երկիրներ . պատերազմական դաշտին վրայ որ եւ է ցեղ ձիու դէմ կրնայ ելնել . եւ իր աչքերէն ցատքած կըպրանման սեւ կրակը տեսնողն՝ կարծէ թէ կոռուղ կենդանեաց մէջ գագանագոյնն է: Բնիկ հայկականցեղից մէջ Խնուսի ձին ամենէն գեղեցիկն է, կը կարծուի այլ որ նիզէա անունն, որով կ'անուանէին: Յոյնք լաւ ձիաբեր երկիր մը, այս տեղոյս անունէն ծագած է, կամ Նժոյգ անունէն: Հիւսիսային Հայոց երիվարքն ալ լաւ, ուժով եւ աղուոր են . այնպէս որ անոնց ամենէն հասարակներն այլ, կ'ըսէ գերմանացի բնագէտ ճանապարհորդ մը, կրնան Շդուդկարտի արքունի ախտոց լաւագոյն ձիերուն կարգը գրուիլ, եւ խրատ այլ կու տայ յԵւրոպա մտցընելու Էրզիրումի, Տրապիզոնի եւ Դրեստի ճամբով: Բնութիւնն որ այսպիսի գեղեցիկ կենդանի մը ընծայեր էր երկրին, անոր ստացողին այլ հանճար տուաւ գանիկայ աղէկ վարժեցընելու եւ աւելի աղէկ այլ ի գործ ածելու . ձիադարմանութեան արուեստն շատ կատարելագործած էր մեր նախնեաց օրերը . որուն կրնան վկայ ըլլալ քանի մը լատին հեղինակաց բանք, եւ մնացորդք ազգային ձիադարմանութեան գրուածոց, որոց մէջ մանրամասն անդամաբանութիւն կայ ձիոյ: Իսկ ձիոյ գործածութիւնն, Հայոց ազնուականաց եւ պատանեաց գբօսանք, ցուցանք եւ պարծանք մ'էր . մեր իշխանաց կտրիճ գորավարաց մէկն, քաջակորովն Մուշեղ, հացկերոյթի մը ստեն դաւաճանութեամբ սպաննուելով, վերջի շունչը տալու ստեն կը ցաւէր կ'ողբար որ չկրցաւ մեռնելու իր ճերմակ երիվարին վրայ, որ այնքան անգամ տարեր էր զինքը յաղթութեան . գոռոզ թագաւորն Շապուի որ այս կտրիճ գորավարին ձեռքէն այլ սրտէն այլ յաղթուեր էր, հրամներ էր որ քարի վրայ քանդակեն անոր պատկերը ճերմակին վրայ հեծած, եւ իր խնջոյից տաճարին մէջ կանգնեն, գոր

տեսնալով՝ արեւուն գինի խմէր, Ապրի՛ ճերմակաճին, ըսելով: Շատ ասեն չէ որ գտնուեցաւ ուրիշ քանդակ մ'այլ մեր երկրին վերջին սահմաններուն վրայ, նոյն քաջակորովը կերպարանելով իր ճերմակին վրայ, թէ եւ գտնող ճանապարհորդն չիճանչցաւ իր գիտը:... Բայց մեր ճերմակն, մեր պիգաստսքն գմեզ շատ հեռու կը թըռցընեն . բաւական ըլլայ այսչափ տեղեկութիւն թէ՛ իրենց համար եւ թէ բոլոր մեր երկրին գործարանատր եւ անգործարան արարածոց:

Ը

Շնորհակալ ըլլանք ուրեմն բնութեան, որ այսքան պարզեւներով հարստացուցեր է մեր երկիրը . եւս առաւել փառք տանք տիրոջն բնութեան, որ այդ պարզեւները վայելել եւ յարգել տուաւ երկրին հանճարամիտ բնակչին, որ ի սկզբանց ժամանակի գիտցաւ ճարտարութեամբ օգուտ հանել անոնցմէ, եւ օտարաց այլ սփռել, հեռաւոր աշխարհքներու բերքերը իրարու պատկերով: Հայն ամեն ասեն եղած է վաստակասէր մշակ իր երկրին մէջ, ժիր վաճառական դուրսի երկիրներ, զգօն գործակալ ազգաց՝ որ գիրար չէին ճանչնար . եւ փոխանակեր է զբնական եւ զարուեստական բերս աշխարհաց՝ որ իրարմէ հեռու էին շատ միջօրէական ժամերով: Հայն բոլոր երկրիս երեսը կը պտըտէր, կը սովրէր զլեզուս ժողովրդոց՝ որոց թարգման կ'ըլլար, եւ ամեն տեղ միտ դնելով կը սովրէր շահ եւ ճարտարութիւն: Իրեն համար օտար երկիր չկար եւ չկայ, եւ ամենայն ազգք իրմէ յիշատակ մ'ունին: Թէ որ լաւ մտադրութեամբ քննուի ազգաց շուրջ կամ բաժանման պատմութիւնն, ինչպէս որ Ս . Գիրք մեզի կը ներկայացնեն, յայտնապէս կ'երեւի որ Ասիոյ հիւսիսային եւ արեւմտեան կողմերն եւ բոլոր Եւրոպա իրենց բնակիչքն առած են այն գաղթականներէն որ ելան կամ անցան ի Հայաստանէ, յառաջ եւ յետ իր Հայաստան կոչուելուն: Թէպէտ եւ հիմակուան քննադատութիւնն տարբեր կարծիք ունի լեզուած ծագման եւ անցանցման վրայօք, սակայն արժան է յիշելու, որ թէ՛ ժողովրդեանը համար, թէ անոր լեզուին համար չկայ երկիր մը՝ որ մեր երկրին հաւասար այնքան բաղդատութեանց եւ նմանութեանց առիթ եղած ըլլայ: Սկսեալ յԵրոզոտէ, ի Ստրաբոնէ եւ յԵստրաթեայ՝ հարցուր ամեն լեզուագիտաց եւ բանասիրաց, որպիսիք են Աքրուրոս, Շուարց, Պոշար, Կալմէդ, Շերվաս, Լագրոզ, Վիսոն, Լայպնից, Լըպրիկանս, Շրէտեր, Շէլլըն, & . Ուիլիէմ, Անգրդիլ, Բալլաս, Գլաբրոթ, Ատելունկ, Պոր, Բոդ, Բեդերման, Վինտիշման, Կադդերեր, Նիպուր, եւ այլն, թէ

ո՞ր լեզուին նմանակից է հայերենն: Ամենքն մեկմեկ կերպ պատասխան կու տան, հայերենին մերձաւոր եւ ազգակից սեպելով գփոփուցացին, ասորին, քաղդէացին, քաղդէացին, հրեայն, թաթարը, կովկասեան – թուրքը, խազախը, պարթեր, փեհլէին, գանդիկը, հնդկա գերմանացին, մարապարսացին, հին յոյնը կամ պելասգեանը, եգիպտացին եւ դպտին, կելտը եւ ուելշը, ինչուան պիսքայացին, ֆինը եւ սիպերիացին: Արդ ի վերայ այս ամենայն խառնափնդորութեան վիին՝ ուսկից կ'ուզեն հանել գհայերենը, մանաւանդ թէ հայերենէն հանել այս վիհը, ի վերայ այս ամենայն աւելի կամ պակաս ծուռ կարծեաց, պէտք է որ այդ վիին խորը ճշմարիտ եւ սկզբնական բան մ'ըլլայ, ապա թէ ոչ անկարելի կ'ըլլայ հասկընալ՝ թէ ինչու՞ եւ ի՞նչպէս այդքան ծանր եւ գիտուն անձանց գլուխք պտըտեր են այդ վիին վրայ: Այս այլ պէտք է լաւ գիտենալ, որ եթէ Ս . Գիրք, պատիժք եւ աւանդութիւնք կու ցուցնեն մեզի գշայաստան իբրեւ սերմնարան մը ազգաց եւ ցեղից, նոյն Հայաստան գարմանալի ընդդիմակութեամբ մը հիւրընկալ եւ օթեան եղած է զանազ ազգաց գաղթականներու, ինչպէս են ասորեստանեայն, քաղդէացին, հնդիկն, հրեայն, քանանացի, սկիւթացի, կովկասեան, թեսաղացի, յոյն, մար, պարսիկ, եւ ինչուան շին այլ: Այս ամեն տոհմք նախ քիչ կամ շատ առեն մը իրենց օրէնքը եւ լեզուն զուտ պահելով, յետ քսան եւ հինգ դարուց խառնուեցան եւ ընկղմեցան տիրող ազգին եւ լեզուին մէջ, այսինքն հայերենին, որ ի հարկէ ինքն ալ անոնցմէ փոփոխութիւն կրեց եւ անոնց բերքերովն հարստացաւ: Քրիստոնէական կրօնքն սրբազան եւ անդրժելի ըրաւ երկայն դարուց աշխատանքը . եւ այդքան տարբեր տարբերքներէ ձեւացուց մէկ ազգ մը, որ ի սկիզբն Դ դարու կը պարունակէր անընդմէջ երկիր մը հիմակուան Փռանկատանի սահմաններէն ընդարձակ, եւ բաժանեալ ի 20 նախարարութիւնս կամ պայագատական աշխարհս, որք բաժանէին ի 620 գաւառս, եւ ասոնք այլ ի հարկէ 40,000 գեղ մ'ունէին, որոց պահպանութեան համար սովորաբար 120,000 զօրականք կային, եւ հոգետր հսկողութեան համար աւելի քան 200 եպիսկոպոս: Այս դարէս ետեւ՝ 1500 տարուան միջոց մը բոլորովին այլափոխեց մեր երկրին օրէնքը եւ երեսոյթը, որ կրեց բաղդին ամեն հարուածքը եւ խաղերը: Նոր ժողովուրդք եկան գրաւեցին գշայաստան, ուր հիմա այլ կ'երեսան որոշակի . վասն զի կրօնքն եւ լեզուն անթափանցելի պարիսպ մը ձգելով մէջերնին՝ օտարականին թողուցին Հայաստանին գետինը, պահելով միշտ տեղացոյն՝ իր սիրելի հայրենիքը: Ասանկով, թէ եւ հեռացեալ, թէ եւ հալածեալ իր բնիկ երկրէն: Հայն իրեն հետ կրէ իր թերափքը, եւ կը մշակէ գհայրենիս իր հարուստ լեզուին

մէջ, կը յարգէ գայն իր կրօնից մէջ, կ'ուսանի՝ անոր յիշատակաց մէջ, եւ կը պաշտէ գայն իր սրտին մէջ: Այս հայրենասիրութիւնս, ի բաց թողլով ոմանց մոլորիլը եւ ոմանց անհոգութիւնը, առաջնորդեց անցուց Հայոց ազգը 44 դարու միջոց՝ ամեն տեսակ դիպուածէ, բնութեան եւ քաղաքականութեան յեղափոխութիւններէ, ընդ մէջ ազգաց՝ որ իրմէ վերջը ծնան եւ իրմէ առաջ մեռան:

Դարձուր դարձեալ անգամ մ'այլ աշքոյ այդ լեռնակղզի երկրին վրայ, որ կը բարձրանայ ի միջոյ Եւրսիանեան եւ Կասպիական ծովուց: Պարսկային ծոցոյն եւ Միջերկրականին, որոց մէջ թափէ գալիս Փիսոնի, Ալիսեայ եւ Իռիսայ: Կուրի եւ Երասխայ, Տիգրիսի եւ Եփրատայ, Պիտամիսի եւ Կիւփոսի . փնտռէ ատոնց ամայի աւերակ ափանց վրայ ազգաց եւ ազանց գոռոզ մայրաքաղաքները . եւ ըսէ ինձ . ու՞ր են Նինուէ եւ Բաբելոն, Մելեկիա եւ Տիգրոն եւ Սամատա . մանաւանդ թէ ըսէ՛, ու՞ր են ատոնց կանգնողքն, այն հգօր եւ անուանի ժողովուրդքն հին դարերու, Քաղդէացիք, Ասորեստանեայք, Մարք Պարթեւք, Կասպաղովկեցիք, Կիլիկիացիք, Լիւդացիք, Կարքեղոնացիք եւ ուրիշ շատեր: Հարցու մէկ հինաւորց մարդու մը, որ անոնց ամենէն ուժով, ծաղկեալ եւ յաջող ժամանակը ապրելով, կը նշմարէր անոնց կործանումն այլ, հարցու Եզեկիելի, ու՞ր են այդ ազգերն ,որք արկանէին գահ իրեանց ի վերայ երկրին կենդանութեան»: Աւա՛ղ . ահա կը ցուցնէ մեզի երկրիս խորը, անդունդը, ահաւոր լիճ մը, ոչնչութեան տեղ մը եւ կ'ըսէ . «Անդ Ասոր եւ ամենայն ժողովք նորա, ամենեքին վիրաւորք... շուրջ գշիրմօք նորա... Անդ Ելամ եւ ամենայն գօրութիւն նորա շուրջ գգերեզմանաւ նորա... անդ տուան Մոսոք եւ Թորէլ եւ ամենայն գօրութիւնք նոցա շուրջ գգերեզմանաւ նորա... անդ Եդովմ եւ ամենայն թագաւորք իր եւ ամենայն իշխանք նորա... եւ նոքա ընդ վիրաւորս ննջեցին ընդ իջեալսն ի խորխորատ»:... Դադրէ՛ ի սպառնալեացդ, գուժաւոր մարգարէ . միթէ պիտի յանդրգնի՞ս ըսելու այլ, թէ «Անդ ամենայն իշխանք հիւսիսոյ, եւ ամենեքեան նոքա գօրավարք Ասորեստանոյն, իջեալք վիրաւորք հանդերձ ահոին գօրութեամբ իրեանց... եւ տարան գտանջանս իրեանց ընդ իջեալսն ի խորխորատ»: Չե՛ս տեսներ, որ ինչպէս այն ալիքներն՝ որ տեսան այդ ազգերը իրենց ափանց վրայ, կը կորուսին խառնուին անկուշտ ծովուն մէջ, մինչդեռ իրենց աղբիւրներն անդադար կը բղխեն նոյն բարձրաւանդակներէն, այսպէս եւ ազգն Հայոց, որ ունէր իր երկիրը այդ աղբերականց մէջ, հոն կու կենայ դեռ, մինչդեռ մէկայլ, ազգերն ոչնչացեր են ի վիրապն ժամանակի: Հիմա սովրէ մեզմէ, ո՞վ

մարգարէ, վասն զի մենք առանց քողոյ կը տեսնանք ինչ որ դու 24 դարու թանձրութենէն կը տեսնէիր . մեզմէ սովրէ . այդ իշխանքդ հիւսիսոյ եւ արեւելից, այդ գորավարքդ Ասորեստանոյն ոչ մեռան ինչպէս Ասուրն եւ Ելամ . այլ ողջացան, ապրեցան որոյ հարուածներէն . գերեզմանն չկրցաւ կլանել իր ամեն փափագածը . եւ Հայն մինակ մնացած քու համրած ժամանակակից ազգերէդ, ինքնին կը հսկէ իր նախնեաց գերեզմանին եւ իր յետնոց որորոցին քով: Հայն՝ ժողովուրդ ազնուասիրտ, ժողովուրդ հիւրընկալ, ժողովուրդ հաւատացեալ, շատ ժողովրդոց օգտակար եղաւ . եւ եթէ երբեմն իբրեւ պատերազմող՝ նիզակակցելով Փուղայ եւ Սաղմանասարայ ի գերութիւն քշեց գԻւրայէլ, գոնէ պաշտպանեց այլ զանոնք իր գետափանց վրայեւ ի բարձունս Առնոնայ (կամ Ռեմանայ) . եւ թէ դաշնակից ըլլալով Նաբոքորոնոսորի, գերի վարեց զիշխանս Յուդայ, սակայն պատուեց այլ զանոնք իր իշխաններէն աւելի . վասն զի ճանչցաւ թէ անոնք Դաւթի եւ Սողոմոնի որդիք են, եւ անոնց ձեռքով կ'ընդունէր գլխին ճառագայթաձեւ թագը, զոր յետոյ նոյն իսկ իր գերոյն գլուխը գրաւ . եւ եթէ ստիպեց երբեմն (ինքն այլ ստիպեալ ըլլալով) զորդիս եւ զդստերս Սաղեմայ՝ բաբելական ուռնեաց ներքեւ արտասուաթաց քնարներու վրայ երգել Սիոնի սաղմոսները, սակայն խուլ չեղաւ Աստուծոյ ձայնին՝ որ ուրիշ մարգարէի մը բերնով կ'ըսէր իրեն . «Պատուէր տուք յինէն այրարատեան թագաւորութեանցն եւ ասքանագեան գնդին . կանգնեցէք գնովաւ (զԲաբելոնի) նետակալս, ելէք ի վերայ... երիվարք, իբրեւ զբազմութիւն մարախոյ» . եւ փութաց վազեց Աստուծոյ օծելոյն, եւ իր նիզակակցին հետ (Կիրոսի), եւ յետ եօթանասուն տարոյ՝ իր գերեաց շղթաները քակելով, ինքնին առաջնորդեց տարաւ զՍաղաթիէլ եւ անոր ժողովուրդը եւ անցուց Հայաստանի եւ Միջագետաց սահմաններէն, եւ ողջ անվնաս պահելով թշնամի ժողովրդոց միջէն հասուց ի Պաղեստին: Հայաստան ինքնին նախախնամեալ երկիր մ'էր, եւ սիրելի Բարձրելոյն, ուր շատ կանուխ յայտնեցաւ . եւ պէտք է որ ամենայն ազգ որ իր ծագումը փնտռէ՝ դառնայ այդ երկրին նայի: Եղեմայ հետքը գտնելու ապահովագոյն ճամբայն է Հայաստան: Ինքն ընծայեց Աստուծոյ իր օրհնեալ կաւը, եւ ընդունեցաւ անոր ձեռքէն զհայրն եւ զմայր մարդկութեան . ինքն ընծայեց ասոնց այլ ինչ որ պէտք էր իրենց պահպանութեան, իրենց սիրոյն եւ զղջմանը համար . ինքն եղաւ խանձարարուրք առաջին ծնածին եւ գերեզման առաջին մեռնողին . ինքն բարձրացուց Արարատայ գագաթը միսանգամ ընդունելու ջրհեղեղէն ազատուած մարդկութեան մէկ հատիկ տունը . եւ այդ իրեն հիւր եղած մէկիկ ընտանիքով

երկրորդ անգամ երկիրս մարդաբնակ ըրաւ: Ինքն կերակրեց առաջին նահապետները, եւ անոնց հաւատքը անխառն պահեց երկարատեան . Աբրահամ ինքնին նոր հայրն հաւատոց՝ իրմէ ծագած է, վասն զի իր հայրենիքն՝ Ուր-Քաղդէացոց՝ հիմա կը ճանչցուի Հայոց յետին պատուարներուն մէջ, լերանցն Կորդուաց, որ Մեծ Հայոց տասնեւիինգ աշխարհաց մէկն է: Վերջապէս, ինքն, ըստ բարեպաշտիկ ասանդութեան, կ'աղաչէր զՅիսուս՝ առաքելոց գլխաւորին հետ՝ որ զգուշանայ ի նենգութենէ Հրէից, եւ զայ իր թագաւորին, Աբգարու հետ՝ ապաստանի յԵդեսիա: Ինքն ընդունեցաւ ուրիշներէ աւելի առաքեալներ եւ աշակերտներ եւ ընծայեց անոնց գառաջին կոյս վկայուիին, նոյն իսկ իր թագաւորին դուստրը, զոր կ'ախորժեմ անուանել քոյր Աբելի . վասն զի սոքա են նախավկայք, մէկն նախնական աշխարհի, մէկայն նորաստեղծեալ աշխարհի . մէկն զոհեալ իր եղբօրմէն՝ մէկայն իւր հօրմէն . ո՛վ աստուածային ողբերգութիւն: Նոյն ինքն Հայաստան յետ իրեք դար տնտնալու, դարձեալ յառաջ քան զուրիշ ազգեր՝ բոլոր ժողովուրդը ընդունեցաւ զքրիստոնէական կրօնս եւ պահեց միշտ . եւ որ զարմանալին է եւ ծանր ընդդիմերեւոյթ մը, քրիստոնէութեան առաջին պատուարն ըլլալով՝ ամենէն ետքի պատուարն այլ է երկրիս արեւելակողմը . վասն զի այս կողմէն՝ Հայաստանի միջօրէէն անդին քրիստոնէայ երկիր չկայ, բաց ի գաղթականներէ կամ քարոզչաց ձեռքով նորադարձներէ, որք կրնան նորատունկը ըսուիլ ի մէջ հեթանոսաց: Ատեն մը իբրեւ կղզի մ'էր, հիմայ իբրեւ թերակղզի մը քրիստոնէութեան այլահաւատ կրօնից մէջ: Այս ճշմարիտ կրօնից զգացմամբ, այս գերագոյն զգացմամբն է՝ որ Հայաստան ոչ միայն կրցաւ մնալ եւ դիմանալ իր ինքնագլխութիւնը կորսնցրնելէն վերջն այլ, հապա նաեւ կրցաւ ամենէն դժուար գործ մ'այլ գործել . այսինքն համաձայնել իրարու զշահախնդրութիւն երկուց աշխարհաց՝ որոց մէջ դրեր է զինքը նախախնամութիւնն . եւ եթէ երբեմն այս բարակ եւ դժուարին պարտուց մէջ պակասած է, աւելի ինքզինքը խաբած է քան զուրիշները: Ապա եւ ոչ առանց արդեանց վաստրկեր է գյարգ եւ համարմունք եւ վստահութիւն տիրող եւ սահմանակից ազգերուն . ինքն տուեր է զօրք եւ կտրիճ զօրավարներ Սասանեաց եւ Բիզանդացոց . եւ իր ճարտարագոյն որդիքները բազմեցուցեր է իբրեւ ինքնակալ Կոստանդիանոսի գահուն վրայ, եւ փոխարքայ Եգիպտոսի եւ Հնդկաստանի տիրապետաց քով . զանազան հնարքներով Արաբացոյն սուրը բթացուցեր է, եւ իրեն սովրեցուցեր քանի մը օգտակար արուեստներ . որոնց հետ ճարտարապետութեան ոճ մ'այլ, որ քիչ մը ձեւափոխեալ ուրիշ հեռաւոր

աշխարհաց մէջ այլ մտաւ . Երոպա անգամ առանց իմանալու առեր է գայն: Հայաստան Կոփրետոսի Խաչակրաց նիզակակից եղած գերուսաղէմ առաւ . Հուլադունի Նետողաց դաշնակից՝ գՊաղտատ առաւ: Ոչ սակաւ պաշտօնեաներ եւ քաջանշան գորավարներ ընծայեց օսմանեան, ռուս եւ պարսիկ տէրութեանց, որոց իշխանութեան տակ հիմայ բաժնուած է երկիրն: Իր ճարտարարուեստ գաղթականաց ձեռք շատ օգտակար ծառայութիւն ըրած է Ռուսաց, Լեհաց, Աւստրիոյ եւ Դանութեան իշխանութեանց, եւ իր վաճառականներովն՝ միջին դարու Իտալիոյ ամեն տէրութեանց, Սպանիոյ, Հոլանտիոյ եւ քանի մը տէրութեանց այլ՝ որ հիմա Փռանկաց մեծ տէրութեանց մասն են: Այս ետքինիս մայրաքաղաքն իսկ, արեւմրտից Բաբիլոնն, մէկ Հայու մը երախտապարտ է իր ամենէն շատ յաճախած ընկերութեան տեղոյն սկզբնաւորութեանը համար . Բարիգու մէջ առաջին քաֆէարանը բացուեցաւ յամին 1672 Մէն ժէրմէնի տօնավաճառին մէջ եւ Դպրոցի ըսուած գետատափին վրայ (Quai de Ecole) . ի ձեռն Յարութիւն կամ Բասգալ անուան, երկրորդն ալ Ստեփան անուն մէկէ մը, որք երկուքն այլ Հայ էին . անշուշտ իրենք չէին նախատեսած թէ իրենց ձեռնարկութիւնն զարգանալով՝ ո՛րչափ բարիք կամ չարիք կարենայ պիտի բերել . բայց մենք կրնանք յուսալու՝ որ այդ նորութեան համար իրենց շնորհակալութեան յիշատակարան մը ընծայեն զքօսասէրք: Իսկ ինձի աւելի նախամեծար եւ ախորժեղի է նկատել այն լուսաւոր նշանները՝ զորս Հայաստան իր հորիզոնէն դուրս այլ սփռած եւ դրած էր երկնից այն կողմերը՝ որոնց տակ իր որդիքն ապաստանարան մը կու բնտրուէին . եւ կու սիրեմ պատուել Օղէանի սահմանին մէջ զՍ . Գրիգոր արքեպիսկոպոս Հայոց Նիկոպօլսոյ ի Ժ դարու, հիմայ պաշտպան Բիթիվիէի . ի Գոմին՝ (Commines) զՍ . Խրիստլ (Ոսկի՞, Chryseuil), տեղոյն պաշտպանը, զոր աւանդութիւնն սեպէ աշակերտ Բարիգու Ս . Դիոնիսիոսին եւ կու ճանչնայ Հայ . ի Ֆոնդէն՝ ի հայրենիս Ս . Բեռնարդոսի՝ պաշտպան տեղոյն զՍ . Ամբրոսիանոս . ի Կանտ՝ (Պելճիոյ) զՍ . Մակար, պաշտպան տեղոյն եւ Հայ եպիսկոպոս Ժ դարու . ի Մանդուա՝ զՍ . Սիմէոն, վերնոյն ժամանակակից . ի Լուզգա՝ զՍ . Ջաւէն կամ Դաւիթ (S . Davino) . յԱնգոնա՝ զՍ . Կիրակոս . ի Պատուա՝ զՍ . Փիտենտիոս եպիսկոպոս յԲ դարու, եւ այլն . որոց ամենքն այլ հայազգի կու ճանաչուին: ... Բայց, ափսո՛ւ, որ հոս չէ յարմար տեղ՝ հայկական Ոլիմպոսի սրբազան բարձունքը թոշրտելու: Փութամ ուրեմն, Հայկակ, բովանդակելու այս հայկական բնագրութեան համառօտ պատկերը . յուսամ որ այս չափովս այլ իմացուի, որ մեր ազգն եթէ եւ

քաղաքական պատմության մէջ առաջին գործերը չէ գործած, բայց եւ շատ մեծ գործոց մասնակից եւս է . ազգ մը՝ որ սկսեալ ի Նոյէ գրեթէ անընդհատ ինչուան հիմայ կը համրէ 250 ազգապետ, իբրեւ նախարար, թագաւոր կամ կաթողիկոս, որոց հետ կապուած են իւր, ասանդութիւններն, եւ անով նաեւ բոլոր ժամանակագրութեան յիշատակը . այսպիսի ազգ՝ արժանի է մտադրութեան եւ քննութեան, թէ իր բնիկ որդոցն եւ թէ ամեն մարդո՝ որ բարեկամ է ճշմարիտ փիլիսոփայութեան: Ես չեմ վախնար ըսելու, թէ Հայաստան մէկ որոշեալ վիճակ կամ նպատակ մը ունեցեր է յառաջ քան զայլ ազգեր, եւ որ աւելի հարկաւոր է գիտնալու, դեռ այդ վիճակն լննցած չէ: Գաղտնիք մը չէ ըսածս, եւ ոչ խորհրդաւոր բան մը, այլ հնացեալ հաւանութիւն մը Հայ մտաց, թէ դեռ գործ մ'ունի կատարելու երկրիս վրայ . բարեբաստիկ գործ մը: Ամեն բան լննցած չէ իրեն համար, դուռ մը պիտի բացուի իրեն համար ատեն մը... որ շատ այլ հեռու չէ, ինչպէս որ կարծեմ . այդ դուռն երկար ժամանակ կրկին կրկին կղպած փակած չննայ պիտի . արդէն զօրաւոր բանալիքներ կը տեսնեմ, եւ համարձակութեամբ կ'ուզեմ ցուցնել . չըլլայ թէ վախնաս, ... մեր երջանկութեան ապագայ բանալիքն, այդ այնքան երկար ժամանակէ վեր բաղձացեալ բանալիքն, այդ բանալիքն՝ է դաստիարակութիւն: Դաստիարակութիւն հայրենասիրական, հայրենասիրութիւն յեցեալ ի վերայ իմաստասիրութեան, եւ սա հիմնեալ ի վերայ սուրբ կրօնից: Առանց այս կապակցութեան չկայ կատարեալ կրթութիւն, չկայ քաղաքականութիւն, չկայ մարդ կատարեալ: Ընկերական պարտքերը լաւ կատարելու համար՝ մարդս կարօտ է հայրենական ներշնչման մը . եւ որպէս զի հայրենասիրութիւնն շնորհի եւ յետ չննայ, պէտք է որ առաջնորդ ունենայ գիմաստութիւն, նեցուկ՝ զհաւատս, եւ պսակ՝ զյաւիտենականն ճշմարտութիւն:

Ո՛վ Հայկակ, ո՛վ Հայ պատանիք, աղէկ քաղաքացի ըլլալու համար՝ պէտք է քննել եւ սովորիլ զհայրենիս: Այս է առաջին ուսումն յետ ուսման հանդերձեալ կենաց: Քննեցէք եւ սովորեցէք ուրեմն այդ ազնիւ եւ բարեբեր Հայաստանը, իբրեւ հայրենիք ձեր եւ դայեակ ամենայն աշխարհի . քննեցէք այդոր բնակազմութիւնը, քննեցէք այդոր բարոյականը . քննեցէք այդոր բարգաւաճումը ի հարուստ լեզուին, որ ապահով գրաւական մ'է բազմատեսակ արկածներով հնձուած գրականութեանը . քննեցէք զայն վերջապէս՝ իր կրօնից գտութեանը, եւ իր ծիսից վայելչութեանը մէջ: Այդ քննութիւնքդ, այդ ուսմունքդ յորդոր ըլլան ձեզի աւելի

քան գաւելի յարգելու զհայրենիս եւ մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակութեան
բանիս: Վասն զի այս իսկ է առաջին պատուէր Արարչին՝ տրուած առ հայրն
մարդկութեան, եւ տրուած բուն իսկ մեր երկրին մէջ . ԳՈՐԾԵԼ ԶՆԱ ԵՒ
ՊԱՀԵԼ:

Գ . Հայկայ շրջան